


ԱՂ. Կ. ԻՎ. Լ. Կ. ԻՎ. Կ.

Am-1250
907

Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ



Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

Ե Ի

ՍԿԶԻՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նրկուցներուդ սխալ



Գ Ի Ն Ն Է 20 կողմից
Գ ու մարտի 13 կողմից

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, № 12

1908

491.99-8
տ-45

Արմ.

3-2793a

3-2793a AM-1250 18 MAY 2010


Ն. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԻԱՆ

191-99-8

S-45

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ




Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

Ե Ի

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ներսիսեանցի սրահ



ՈՒՅՆ. № 21289
Թ Ի Ն Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՍՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, № 12

1908

Գրքն է 20 կողմից

ՄՈՍ ԿԱՄ 81

12 0 հուն 2013



39967-67

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Մայրենի Լեզուի» այբբենական մասը կառուցուած է հետևեալ հիմունքների վրայ. մենք պատմում ենք, զննում ենք, վերլուծում ենք և գրում ենք. մենք պատմում ենք մի բարոյակը թիվական առակ, զննում ենք այդ առակին նիւթ տուող գլխաւոր առարկան, վերլուծում ենք այդ առակից առած օրինակելի բառեր և, վերջապէս, գրում ենք այն տառերն ու բառերը, որոնք վերլուծութեան հետևանք են եղած: Այդ նպատակներին համեմատելու համար ամեն մի դասի սկզբում զննում ենք մի պատկեր, այդ պատկերի զրուցատրութեան նիւթը առաջարկում ենք իւր տեղը, իրազննելի առարկան և վերլուծմանի բառերը մատնացոյց ենք անում և վերլուծութեան արդիւնքը առաջարկում ենք կարգալու և գրելու համար: Բառի վերլուծութիւնը կատարում ենք հնչական եղանակով. բայց վերլուծութիւնն սկսում ենք ուղղակի բառից և ոչ նախադասութիւնից. բառերը վերլուծելիս էլ շատ քիչ ենք զիմում վանկերին, այլ աշխատում ենք պարզ հնչիւնների վերածել նաև երկավանկ բառերը:— Գործի սկզբում, բարոյախօսական առակներին զիմելուց առաջ, մենք բաւականանում ենք առանձնելով, որոնք իրանց կարգին զտուած և ակախօսայի կերպարանք ստացած բարոյախօսական ասացուածներ են:

Գրքիս երկրորդ շրջանը առաջին ընթերցարանն է Այբուբենից յետոյ: Նա բաղկացած է տասնևից մանրաշրջանից: Ամեն մի մանրաշրջան բովանդակում է հետևեալ նիւթերը՝ նախ զբնութիւն մի խումբ համապաշտօն առարկաների անուններ, որոնց վերաբերութեամբ վարժապետը շատ համառօտ զրուցատրութիւն է անում, կարգալ տալուց առաջ. ապա այդ միևնոյն առարկաների անունները, խառն դասաւորուած, առաջարկուած են զբաւոր աշխատութեան համար. զբաւոր աշխատութեան նիւթն էլ պատրաստ-

ւում է նախ բերանացի, յետոյ մանուկները ամեն մի առարկայի համար գրում են մի կարճ նախադասութիւն: Այնուհետև այդ միևնոյն բառախմբին համապատասխան գալիս են ասացուածներ, առածներ, հանելուկներ... Այս համառօտ ասացուածներն ևս, պատշաճաւոր բացատրութիւնից յետոյ, կարող են ծառայել որպէս նիւթ գրաւոր աշխատութիւնների համար: Ազատ ընթերցանութեան համար ամեն մանրաշրջան ունի մի նկարագրական և մի պատմողական յօդուած և մի կամ մի քանի մանկական ոտա- նաւոր:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

(Այբբենական մասի վերաբերութեամբ)

Առաջին պատկեր.—Զրուցատրութեան ծրագիրը կազմում է ուսուցիչը, նիւթ առնելով ժողովրդական առածը: «Թնչ-որ կասես, այն կըլսես»: Զրոյցը՝ վերջ-իվերջոյ պիտի յանգի այն բանին, թէ ինչպէս մանուկները խաղի ժամանակ մօտենում են կարասին և, զանազան բացականչութիւններ անելուց յետոյ, կեղբոնանում են ա, օ, ու ձայների վրայ, որոնց ձայնանիշները (նշա- յետոյ, կեղբոնանում են ա, օ, ու ձայների վրայ, որոնց ձայնանիշները (նշա- նագրերը) ուսուցիչը ցոյց է տալիս նախ շարժական տառերով և ապա գրելով:

II. Զրուցատրութեան նիւթը առնելու է հետևեալ առածից. «Բանուկ երկաթը ցոլուն կըլի. բանուկ մարդը տոկուն կըլի»:—Ակնակապ վարպետը իւր կապած ակը տանում, տալիս է դարբնին, որ երկաթից նրա համար օղ շինի... Զրոյցի ահագին պաշար... Ակնակապ վարպետ—մի բանուկ մարդ. ակը՝ ար- դիւնք նրա տոկունութեան. դարբին—մի ուրիշ բանուկ վարպետ, օղը՝ ար- դիւնք նրա տոկունութեան. նա համբերութեամբ տաքացնում է երկաթի շերտը դիւնք նրա տոկունութեան. նա համբերութեամբ տաքացնում է նրան սալի վրայ և վերջ- հնոցի մէջ, վարպետութեամբ թակում-կռացնում է նրան սալի վրայ և վերջ- իվերջոյ հագցնում է ական շուրջը. օղը միշտ ցոլուն է, քանի որ բանուկ է, իվերջոյ որ գործի մէջ է. բայց հէնց որ դադարում է գործելուց, ժանգոտում, քանի որ գործի մէջ է. բայց հէնց որ դադարում է գործելուց, ժանգոտում, ոչնչանում է: Վերլուծանելի բառերը՝ ակ, օղ ոչ միայն պարզ են, այլ իրանց երկու տառով բաղմամբիւ բառեր են կազմում և կարգաւ-գրելու գաղտնիքը լի- վին բաց են անում մանուկների առաջ: Հարկաւոր եղածին չափ պէտք է եր- կար կանգնել այս վարժութիւնն անցնելիս, մանաւանդ երբ ակ և օղ բառերին աւելանում է սալ բառը: Եթէ ինքը ուսուցիչը այնքան ջոկուռ և կռու, որ կա- րողացաւ հմտութեամբ և համբերութեամբ անցնել այս գլուխը, ապա նա գործի տէրն է, նա հէնց սկզբից յաղթահարել է բոլոր դժուարութիւնները:

III. Զրուցատրութեան նիւթը առնել հետևեալ առածից. «Կատուն մսին չըհասաւ, այսօր ուրբաթ է՝ ասաւ»: Առածի իմաստը: Մի նոյնանման առած

աղուէսի մասին: Կատուն—առարկան իրազննել. կասաւ—բառը վերլուծել. վերլուծել և միւ բառը: Գրութիւնը զուգընթաց:

IV. Ուսուցիչը պատմում և պատմել է տալիս «ազան շուն» առակը (ազան—աչքածակ, որ իր ունեցածով չի բաւականանում): Իրազննել ռուս, որ- պէս առարկայ. վերլուծել «շուն» և «շուր» որպէս առարկայի անուն: Գրութիւնը զուգընթաց:

V. Զրուցատրութեան նիւթը «էշը և շունը»—առակ. իրազննել էօր որպէս առարկայ (շատ համառօտ) և համեմատել շան հետ (նմանութիւն, զանազանու- թիւն). վերլուծել՝ էշ-էշը. գրութիւն:

VI. Սազն ու բաղը (առակ). իրազննել սաղը և ապա բաղը (Ջրային Քոչուններ). վերլուծել սաղ, բաղ, լին բառերը: Գրութիւն:

VII. Հաւը և ցինը (առակ). իրազննել... ցինը որպէս գիշատիչ Քոչուն: Վերլուծել՝ հաւ և ապա ցին: Գրութիւն:

VIII. Կազնի ծառը և եղէզը (առակ): Առակի բովանդակութիւնը այսու- հետև համառօտ կցուում է դասերին: Իրազննել ծառը որպէս առարկայ (ար- մատ, բուն, ճղներ): Վերլուծել 1, ծառ. ցոյց տալ ո և ր տառերի հնչական տարբերութիւնը (առանձին ուշադրութեամբ, որովհետև քաղաքացի մանուկները շատ դժուարութեամբ են ընտելանում այդ հնչիւնների տարբերութեանը). 2, եղէզ. է և ե տառերի գործածութիւնը բառի սկզբում, մէջը և վերջը:

IX. Ոգնին և օձը—առակ. իրազննել օձը որպէս ներկայացուցիչ սո- զունների (համառօտ). վերլուծել 1, օձ. համեմատել ձ և ծ տառերի հնչական նմանութիւնը. 2, ոգնի համեմատել օ և ո տառերը բառի սկզբում, մէջը և վերջը:

X. «Որը մանուկը խաչ-քարի առաջ աղօթում է»: Ո՞վ է որը. մօրից որը, հօրից որը, բոլորովին որը. որը ի վիճակը: Վերլուծել «խաչ» և ապա «առ». իւ և յ, ք և կ տառեր: (Բ տառի գրութիւնը տուած է XII դասի հետ):

XI. «Կթի կով»—առակ. իրազննել կովը (որո՞նց կենդանի) նրա տուած օղուտը մարդուս—կաթ, սեր, մածուն, իւղ, պանիր: Վերլուծել կով, կաթ, պանիր. է և վ տառերի գործածութիւնը (վ գործ է ածուած բառի սկզբում, իսկ է բառի մէջը և վերջը. ո-ից յետոյ միշտ գրուում է վ. վ—իրանից առաջ եղած ո-ի հնչիւնը փոխում է օ-ի):

XII. Փիղ և քոթոթ—առակ. ուսուցիչը առակից դուրս պատմում է մի- քանի հետաքրքիր տեղեկութիւններ փղերի կեանքից, յիշեցնում է, թէ ինչ ահագին դեր են կատարում ժամիմ ու կնիքը:—Վերլուծել՝ փիղ և մի, յետոյ ժամի: Գրութիւն (Բ տառի գրութիւնը այս դասի հետ է):

XIII. Առիւծը և մուկը—առակ. առակի իմաստն է, թէ երբեք չպէտք է արհամարհել թոյլերին, որոնք ընդունակ են անփոխարինելի ծառայութիւններ անել ուժեղներին. մուկը աղատում է զազանների թագաւորին, որ ամբողջա- պէս մճճուել էր ցանցի մէջ, կոծոտելով ու կտրատելով ցանցի թելերը:

Այս դասի ժամանակ ուսուցիչը պիտի բացատրի, որ իւ (իվ) վանկը երբեմն կարդացուում է իււ (իւ), այսինքն բաղաձայն է-ն դառնում է ձայնաւոր ու: Բա- ցատրութիւնը լինելու է միայն օրինակներով. վերջները արժիւն և առիւծ բառերը: Առաջին բառի մէջ իւ-ից յետոյ գրած բաղաձայնը (ն) իրանը չէ, եկամուտ է, նրան կարող ենք դէն ձգել, երկրորդ բառի մէջ իւ-ից յետոյ եղած բաղաձայնը (ծ) իրանն է, եկամուտ չէ, արմատական է. նրան դէն ձգել չենք

ակ, կա, կալ, կաղ, տաղ, կաս, տաս, տակ,
տատ, սուտ, կուտ, տուտ. կա-տակ, սա-լակ.


Handwritten practice line: *կա կալ կաղ տաղ կաս տաս տակ տատ սուտ կուտ տուտ կա-տակ սա-լակ*

միս-ի. մ.


իմ, մի. միս, սիմ. մատ, տամ. մուկ, կամ.
մաս, մաղ. մա-տիտ, ա-տամ. մա-տիկ, մա-կիկ,
տօ-տիկ, մօ-տիկ, Մի-սակ, Ի-սակ, Լա-սիկ.

Handwritten practice line: *մի միս սիմ մատ տամ մուկ կամ մաս մաղ մա-տիտ ա-տամ մա-տիկ մա-կիկ տօ-տիկ մօ-տիկ Մի-սակ Ի-սակ Լա-սիկ*

Handwritten practice line: *Մի սակ Ի սակ Լա սիկ*



IV



շուս-ի. ն. ճ.

օղ, օշ, լօշ, շօղ, շատ, մատ, շուտ, սուտ, տաշ,
տաս, տաղ, մաղ, շիշ. ուշ, նուշ. սա, սան, նա.
շա-շան, ճա-շան. ա-նուշ, Ա-նուշ. շա-մամ,
ճա-մամ. Ան-նա, ուշ լինի, անուշ լինի. Անուշ,
ասան նուշն անուշ ա.

Handwritten practice line: *շա շան ճա շան ա նուշ Ա նուշ Ան նա ուշ լինի անուշ լինի Անուշ ասան նուշն անուշ ա*

գա-րի, կա-րի. զի-նի. գա-րուն, կա-րագ. Գա-րօ.

րաղ — բ. դ.

բան, բագ, բու, բուն, բա-րի, բա-րակ.
զա, դա, զիր, դաս, տաս, դատ, տատ.

լիճ — ճ.

ճաշ, ճար, ճաղ, ճուտ, ճօճ, ճանճ, ճա-կատ,
ճի-ճու. ճա-նիկ. Բար-կէն. Գատ.


Սագիկ-սագիկ, կարմիր տօտիկ,
Բաղիկ-բաղիկ, մարմին ճօճիկ,
Ջրրի միջին օրօր-օրօր
Հօղ-էն տալիս օրըն բօլօր,
ձիճու կալնում ու կըլանում:

բ. գ. զ. դ. ի. կ. ր. ս. ա. գ. ր. ա. ղ. յ. ի. ճ.

լ. յ. ր. յ. ա. ղ. գ. ա. ղ. յ. ա. ղ. յ. ա. ղ. յ. ա. ղ.

Օր. Տ. Գ. Բ. Դ. Ե. Զ. Ը. Գ. ա. ղ. յ. ճ. ա. ղ. յ. ճ.

VII



հալ — հ. լ.

հն, հօ, ահ, զհ. հաս, հատ, հօտ, հէր, հաստ.
հա-սակ, հա-լալ, հա-լան, հա-լատ, Հա-նէս, Հա-մօ...
նա, նալ, նա-լակ. կա, կալ, կա-լիճ. ասն, ասալ...

Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե. Կ. Ե.

ցին — ց. Յ.

հալ, հաց, ցալ, ցէց, ցից, ցարտ, ցա-ցակ, Յա-կան.

— Կարմիր-կտուց սանահէր,
Սանմէր հաւր ուր զընաց:
«Ճուտիկ-մուտիկ՝ ջու-ջու-ջու,
Աղբահարում կուլ զընաց»:

յ. յիւն, կապ, զիւր, զատ, զանկ, զոտար

հ հ Կ հաճ, Կակամ, հաճես.

VIII



Ժառ — ծ. ո, ու.

ար, ու. սար, սառ. տար, տառ. կար, գառ.
ժիտ, ժիծ, ժիր. ժի-բան, ժա-բառ. ժա-ղիկ.
արու, առու. Ծա-տար, Ռու-բէն:

Ջ Ջ յ Ջառ, առառ, Ջիւան, առառայ.

եղէզ — հ.

էս, ես. էն, են. էգ, եկ. եղան, եկան. եւա. եղիշէ.
սէր, սեր. մէր, մեր. հէր, հեր. բեր, բեղ, ծեր, կեր.


ե եա, են, եկ, բեր, բերան, եղեզ, եղ.

Ջ Ջ ե Ջապար, եղիս, Ջարեւ.

ԵԳ - ԷԳԵԵԵ

Անտառի մօտ աճել էր մի կաղնի ծառ:
Ծառի մօտ դուրս էր եկել մի եղէգնիկ: Կաղնի
ծառը շարունակ ծաղրում էր եղէգնուն: Ծաղրիր,
ասաւ եղէգնիկը. իմ ծիծաղելու օրն էլ հօ կըզա,
կըհասնի: Եւ ճշմարիտ՝ էգ օրն էլ եկաւ, հա-
սաւ:— Ե՞րբ եկաւ եղէգնի ծիծաղելու օրը:





օձ—ձ, Զ.

ձի, ձու, ձիգ, ձէտ, ձէն, ձուկ, ձագ, գանձ, տանձ.
ձեր, ծեր. ձագ, ծակ. ձա-գառ, Գան-ձակ...


ոզ-նի—ո, զ.

օ, ո. օր, որ. օղ, ող. օղ, ոտ. օձ, որձ. որ-զի.
հօր, հոր. մօր, մոր. հօտ, հոտ. աղօտ, աղոտ.
զօր, զօռ, գանգ, գա-ւակ, գան-գակ. գատիկ. Զարէհ.

ՅՅ ՅՅ ՅՅ ո, ց, օջ, օբ, որջ, գանգ, հոր

ՉօլօՉ. Չ. Չ. Լուսարիկ, Լուսրե, Լօր.

Օջի կծաձր կր սապաւնա Պակաւն.



Ծառի արմատի մօտ բուն էր շինել մի օձ
և նրա մէջ կծիկ եկած նրնջում էր: Ծառին
մօտիկ կենում էր մի ոզնի: Մի մարդ տեսաւ
ոզնուն և ուզեց բռնել: Ոզնին դիմեց օձին: Օձը
ներս ընդունեց նրան իր բունը: Երբ մարդը
հեռացաւ, օձը ասաց ոզնուն. ընկեր, տեղս նեղ
է, ասեղներդ էլ ինձ նեղացնում են. դուրս գնա
բնիցս:

Ոզնին բարկացաւ և օձին դուրս արաւ:—
Ո՞նց դուրս արաւ նա օձին:

Արտուտիկ, նախշուն տօտիկ,
Իջնեն կալեր մէկիկ-մէկիկ,
Ընտրեն ցորեն, ուտեն կուտիկ
Եւ ծըլ-ւը-լան շա՛տ անուշիկ:

ա Ա. օ Օ. ո Ո. է Է. ը Ը. ի Ի. ե Ե. ու Ու.

ս, ս, յ շ ր ր, ջ ն, մ, ծ, ճ, տ, ք, ք,
Ս, Ռ, Լ, լ, Ղ, ղ, Ջ, ճ, Ն, Մ, Ծ, Ճ, Տ, Բ, Գ,

դ, ր, ց, ձ, կ.
Գ, Բ, Յ, Զ, Կ.

X



խաչ—խ. չ.

խակ, խաղ, խող, խոտ, խոց, խունկ, խորհն.
չար, չոր, չանկ, աչ, աչիկ, խաչ, խաչիկ, Չատի.
կաղ, կախ, ցեղ, ցեխ, աղ, ախ, մղակ, Մեխակ.

Երեսան խաչի առաջ ինչ է անում:
Երեսին խրնձոր, խաչին մատաղ մի ասիլ:
Աղէսի դանշը խաղողին չըհասաւ, ասեց՝
խակ է: Իմացողին մին, չիմացողին հազար:

Կ Կ


Կ Կ

Կ Կ

քար—ք. ֆ.

կար, քար. կաղ, քաղ. կող, քող. գիրկ, գիրք.
կանոն, քանոն. դարի, քարի. ֆրիստոս. ֆերոբ.
մարի ոչխար, մատակ ձի, մարի հաւ, մերան խող.

XI



կով—վ.

վար, վառ, վատ, վարդ, վէզ, վեց, վեր, վուշ, վէճ. վի-ճակ, Վա-հան, Վար-դան, Վա-ղար-շակ...

կաթ — թ.

թաթ, թութ, թան, թուխ, թուշ, թուկ, կոթ, թել, թուզ, հորթ, մորթ, թու-թակ, ջու-թակ, ջո-րի, ջա-ղաց, գա-ւաթ, Թամամ, Թո-րոս.

պանիր — պ.

պար, պատ, պաս. պապ, կապ. բաղ. պատ. բաղ, պաղ. բա-նիր, պա-նիր. բարակ, պարապ, Պօ-ղոս, Պետ-րոս.


վ Վ Ք պ կոթ վապուղ բար բան.

բուզ պաս կար պանիր պասպ.

Չ թ Պ Վ Վարդան Բանա Թ.

Պարանիր բանին բրու չի ապի.


վազ, վաղ, վախ. վեց, վէզ, վէճ, վարձ, Վան. կաւ, հաւ, նաւ, ցաւ, թիւ, կռիւ, հաւատ, կաւիճ. կով, հով, սով, բա-րով, օրով, տարով, կացնով. ով—օվ, Ովսան, Ովակիմ, Ովսիա, Ովկիանոս...



Տան-տիկինը մի կաթնատու կով ունէր, կաթ-նից նա մածոն էր մէրում, զաւակներին կերակ-րում: Կաթնից ա մածնից խնոցի էր հա-րում, եզր հանում, պահում, թանից էլ կերա-կար պատրաստում: Կաթնից պանիր էլ էր շի-նում: Օրէնը երկու անգամ կթւում էր կովը և

ամեն անգամ մի մեծ կովկիթ կաթն էր տալիս: Մի անգամ տան-տիկինը մտածեց. արի մի երկու օր չըկթեմ կովը. վերջին օրը հինգ-վեց կովկիթ միանգամից կըկթեմ: Եւ չըկթեց: Միքանի օրից յետոյ, երբ ուզում էր կթել, տեսաւ որ կովը էլ կաթ չունի. անկթիլ մնալուց կաթը ետ էր տըւել նրա ծծերում:— Խեղճ տան-տիկինը ուշ հասկացաւ իր սխալը:

XII



փիղ-Փիլ—փ. ֆ.

փուփ, փակ, փոս, փափուկ, փետուր, Փըրկիչ...
փէս-ֆէս, փլաւ-ֆիլաւ, ֆուրգոն, մաֆրաշ...

ժանիք—ժ.

ժամ, ժիր, կաժ, ժանգ, բաժակ, բաժին բժիշկ...

Ճ. ժ. Ճ. ժիւղ. յորոք. ժանիք. ՝ ժիւք.

ժ. ժ. Ճ. Ճ. Ճ. ճիւղիւ. ՝ ճիւք.


Ճանիքիւ փիղը պաշտպանում է.

Փ Ի Ղ

Կաթնասուն կենդանիներից ամենախոշորը փիղն է: Նա ապրում է տաք երկիրներում: Մարդիկ փոքրուց բռնում են նրան և ձեռնասովոր են անում:


Մի անգամ քաղաքի փողոցներով ման էին ածում մի ձեռնասովոր փիղ: Մարդիկ թամաշա էին դարս եկել: Էդ ժամին մի փոքրիկ շնիկ, որտեղից որ էր, դարս է վազում և սկսում է փղի վրա հաջել:

«Ինչի՞ ես հաջում, հարցնում է մեծ շունը.
ուզում ես՝ փղին վախեցնելու»:



— 2է, վախեցնել չեմ ուզում, պատասխա-
նում է քոթոթը. հէնց էնպէս, հաջում եմ, էլի.
տեսնողները 'հօ կասեն՝ տեսէք, մեր քոթոթը
որքան քաջ է, որ փղի դէմ էլ հաջում է:

XIII



գայլ—յ.

հէր—հայր. մէր—մայր. սէլ—սայլ. կէծ—կայծ.

էս—ա՛յս. էսօր—ա՛յսօր. էսպէս—ա՛յսպէս.
ա՛յ, է՛յ, թէ՛յ, հա՛յ, հայ՛, բայ՛, վայ՛, փայ՛...

բո՛յր-բու՛յր. թո՛յլ-թու՛յլ. ծո՛յլ-ծու՛յլ. բո՛յս-բու՛յս...


յ գայ, ապ, այ՛, կայ՛, եայր, մայր.

բայ, ճայ, բոյս, յոյս, այր. նարայր.

Մարի լանջով վազում էր մի պարզ առու:
Գառը մօտեցաւ, որ ջուր խմէ: Գայլը տեսաւ
վերեից և ձայն տրւեց. է՛յ, դու, գառնուկ, ի՛նչու
ես ջուրս պղտորում. այդ արարմունքիդ համար
ես քեզ պիտի ուտեմ: Գառը ուզեց արդարանալ.
բայց անօրէնը ականջ չարեց և խեղճ գառնու-
կին պատառոտեց ու լափեց:

Սիրուն անմեղ իմ գառնուկ
Բարզրդ սպիտակ ու փափուկ.
Գաշտ վազելով ու արօտ
Մօրրդ քաշում ես կարօտ.
Մի լար, գառնուկ սիրական,
Փոքրիկ տղի դա նման,
Կրգա մայրդ, հետը շատ
Կրբերէ քեզ անուշ կաթ:

XIV



առ ի ծ—ի *)

իւր, բիւր, աղբիւր, հիւր, հիւս, հիսեւ, արիւն...

յ առիս չ, ապրիս, հիւս, սպրիս և.

այիս, հիւսիս, յիս, չոյիս և, րիս ր.

Մակը բան էր շինել առիծի որջի մօտ և
ապահով ապրում էր: Առիծին դուր չեկաւ մկան
համարձակութիւնը. նա ուզեց մկանը ջարդել:
«Ինձ մի ջարդիր, տէր, խնդրեց մակը. թող

*) Կարգն յառաջաբանի ծանօթութիւնը:

ապրեմ քեզ մօտ, ձեռքիցս եկած լաւութիւնը կ'անեմ»։ Առիժը ծիծաղեց, բայց էլի թող տըւեց։
Ի՞նչ լաւութիւն արաւ մուկը առիժին։

XV

յոպոպ—յ.

հարկ, յարկ. հարթ, յարդ. համր, յամր. հետ, յետ. համար, յամառ. հատիկ, յատակ, յատուկ. երեխայ, քահանայ, քաթայ, ծառայ, փեսայ, տեսայ, եկայ, երեկոյ, յետոյ, յարգոյ.

յ. յարկ, յարդ, յամառ, յամրայ

Զ. Զ. Զրատան օրհնեց ճանուկիւնքիւն

Յոպոպը ձու պիտի ածէր, որ ճուտեր հանէր, բայց բուն շինել չգիտէր։ Նա մի պատրաստ բուն գտաւ, ձու ածեց, որ թռխս նստի։ Միւ օրը յոպոպն զգաց, որ բունը հոտում է. գնաց, որոնեց մի ուրիշ բուն, նորից ձու ածեց։ Ըստ չանցած՝ այս բնից էլ սկսեց վատ հոտ գալ։

Այս տեղի թռչունները, ինչպէս երեւում է,


բոլորն էլ հոտած են, ասեց յոպոպը, թողեմ, հեռանամ, ուրիշ երկիրներ գնամ։

«Աստուած բարի ճանապարհ տայ, պատասխանեց ազուար. գնան, ուր ուզում ես. բայց քանի որ այդ կեղտասէր բնութիւնը հեռոգ է, հոտն էլ ամեն տեղ հեռոգ կըլինի։

ու—ու. իւ—իւ. և—ել. եա. իա. էի.
լե-զու—լե-զուի. ձու—ձուի. մե-ղու—մե-ղուի.
հոգի—հո-գեակ. որդի—որ-դեակ. մա-նեակ.
Մա-րիամ, Մա-ղա-քիա, Ա-սիա, բա-ղիա.
Մար-գա-րէի, Ե-ղի-շէի, գրէի, եր-գէի, տես-նէի.
հլը—հիւր. իր—իւր. լաւութիւն—լաւութիւն.
հայր—հայր. մայր—մայր. եղբայր—եղբայր...

Մի խնդրիր Աստուծուց ոչ փող, ոչ պատիւ,
Այլ քեզ կըթելա խելք, շնորք սիրտ ազնիւ.
Երբէք մի պարծենար, թէ արդէն գիտան ես,
Որքան բան սովորես, այն է օգուտ քեզ։

Օգնող եղիր ընկերիդ,
Աղքատներին սէր ցոյց տուր.
Տէրն ասում է՝ չէ անվարձ
Նաև բաժակ մի ցուրտ ջուր։



ԱՄԲՈՂԶ ԱՅԲՈՒԲԵՆԸ

ա, բ, գ, դ, ե, զ, լ, թ, ժ, ի, յ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ,

ա, բ, ց, լ, փ, բ, ա, օ, ֆ. (ի, յ.)

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Զ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ,

Տ, Բ, Յ, Ի, Փ, Ք, Ու, Օ, Ֆ.

Ամբողջ այբուբենը

ա. բ. գ. դ. ե. զ. լ. թ. ժ. ի. յ. խ. ծ. կ. հ. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ու. ս. վ.

դ. ե. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ու. ս. վ. ջ. ու. ս. վ.

փ. բ. ա. օ. ֆ.

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ. Ի. Լ.

Խ. Ծ. Կ. Հ. Ձ. Ղ. Ճ. Մ. Յ. Ն. Շ. Ո. Զ. Պ. Ջ. Ռ. Ս. Վ.

Տ. Բ. Յ. Ի. Փ. Ք. Ու. Օ. Ֆ.

Ք. Ու. Օ. Ֆ.

1. Ա. Գ. Ա. Հ. Շ. Ո. Ի. Ն. *)

Մի շուն կար: Մի օր այդ շունը, մի մտալի ոսկոր բերանին, անց էր կենում կամուրջով: Կամուրջի տակից պարզ ջուր էր վազում: Չունր տեսաւ, որ մի ուրիշ շուն գնում է ջրի միջով: Սա էլ բերանին մի մեծ մտի կտոր ունէր: Չունր կլանչեց ու ցած թռաւ կամուրջից. ուզում էր միւս շան բերանից մտի կտորը խլել: Բայց իհնչ՝ ջրի միջին ոչ շուն կար, ոչ միւս. կենդանին խարուել էր իւր շրւաքից. ազահութիւնը զրկեց նրան իւր ունեցածից:

2. Հ. Ա. Ի. Ը. Ե. Ի. Յ. Ի. Ն. Ը.

Հաւր ձագերն առաւ ու գնաց քջուջ անելու: Յինը տեսաւ նրանց և սկսեց պտոյտ-պտոյտ անել երկնքի երեսին: Մայրը ձայն տրւեց: Չագերը հասկացան, որ վտանգ կայ, վազեցին, մտան մօր թևերի տակ: Բայց մի ձագուկ ականջ չարեց մօր ձայնին: Յինը նետի պէս ցած իջաւ, ճանկերի մէջ առաւ նրան ու տարաւ, անուշ արաւ:

*) Այբբենական մասը վերջացնելուց յետոյ՝ ուսուցիչը միանգամ էլ բացատրում է մանուկներին, որ ու տառը շինուած է ու և տառերի միացումից, իսկ ի տառը ի և ւ տառերի միացումից, դրա համար էլ այդ տառերի գլխագրերը գրուած են երկու տառից՝ ու=ՈՒ, իւ=ԻԻ կամ ու=ՈՒ, իւ=ԻԻ:

3. Ս Ա Գ Ն Ո Ի Բ Ա Դ Ը

Սազն ու բազը լճի երեսին լողում էին ու խօսում: «Բնդիկ, ասում էր սազը. տեսնում ես՝ թէ ինչ շնորհալի թռչուն եմ. ջրումը լողում եմ, օդումը թռչում, գետնի վրայ էլ ման եմ գալիս. ճշմարիտն ասա՝ ես բոլոր թռչունների թագաւորը չեմ»:

— Կասկած չկայ, որ դու շատ շնորհալի թռչուն ես, պատասխանեց բազը. բայց ես էլ քեզանից պակաս չեմ, հա՛...

«Ա՛յ միամիտ թռչուններ, ասաց նրանց ազուար. ինչո՞ւ էք հպարտանում. կարո՞ղ էք դուք շան պէս վազել, ծիծեռնակի պէս թռչել, կամ ձկան նման լող տալ»:

Սազն ու բազը գլուխները կախ գցեցին:

«Հա՛, ընկերներ, շարունակեց ազուար. աւելի լաւ է մի բան գիտենալ ու հիմնաւոր, քան թէ շատ բան ու բոլորն էլ կիսատ-պուտ»:

4. Է Շ Ն Ո Ի Շ Ո Ի Ն Ը

Էշն ու շունը միասին ճանապարհ էին գնում: Մի խոտաւէտ տեղ երկու ընկերները կանգնեցին, որ հանգստանան: Երկուսն էլ սոված էին: Էշն

սկսեց արածել կանաչ խոտը: Չունն ուտելու բան չունէր:

«Խուրջինումդ շատ հաց կայ. մի կտոր ինձ տուր՝ ուտեմ», խնդրեց շունը:

— 2եմ տալ, հացը ուրիշների համար է. ա՛յ, թէ ուզում ես, դու էլ խոտ կեր ինձ նման:

«Ես խոտ չեմ ուտում, է՛շ բարեկամ, ասաց շունը. աղաչում եմ՝ մի պատառ հաց տուր»:


Էշը ականջ չրդրեց շան աղաչանքին:

Այդ միջոցին թփերի ետեւից դուրս եկաւ գայլը, տեսաւ շանը, կանգնեց և տխուր ձայնով օռնաց: Էշը զարհուրեց. «Ի՛մ սիրելի, ի՛մ պատուական ընկեր, անա՛ Քեզ բոլոր հացը, կեր, անուշ արա՛, միայն թէ ազատիր ինձ գայլի ատամներից»:

Չունը երեսը շուռ տրւեց ու հեռացաւ: Մի բոպէի մէջ գայլը պատառ-պատառ արաւ էշին:



ԸՆԹԵՐՑԱՐԱՆ



ՄԱՆՐԱՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ *

1. Դասական առարկաներ՝ գիրք, գրեչ, գրչակոթ, գրչածայր, գրչաման, գրչահատ, քարեգրիչ, քարետախտակ, գրատախտակ, կաւիճ, մատիտ, տետրակ, թանաք, թանաքաման:

2. Խաղալիք՝ վեգ, գրնդակ, հոլ, խարազան, խաղատիկին, չըւան, օղակ, չիլկափայտ, չիլիկ:

*) Ուսուցիչը բացատրում է՝

- ա. Դաս, դասի—դասական:
- բ. Առ—առաջը, մօտը. արկ—գցումածը, գրումածը:
- գ. Առարկ, առարկայ—մի բան, որ գրած է մեր աչքի առաջ:
- դ. Դասական առարկայ—դասի ժամանակ հարկաւոր բան:
- ե. Խաղ, խաղալ, խաղալու—խաղալի, խաղալիք:

3. Գիրք, մէջը քաղցր միրգ:

Ինչ որ գրուեցաւ գրիչով, չի հանուիլ բահով, բրիչով: Մատիտը մատիդ, կօշիկը ոտիդ, ճանապայ երթալիս միշտ լինին մօտիդ:

Հօլը կ'ուզէ խարազան, որ պտոյտ գայ անխափան: Վեգի կարմիրն է սիրուն, վաստակ է զարկողներուն: Չըւան ցատկերն օգտակար շարժմունք է մանկանց համար:

4. Գրեցէք ձեր տետրակների վերայ՝

Գրիչը դասական առարկայ է: Գնդակը խաղալիք է: Գիրքը... վեգը... մատիտը... տետրակը... չիլիկը... քանոնը... թանաքը...

5. Անգիր սովորեցէք այս առածները եւ գրեցէք՝

Ով կրկարդայ, նա մարդ ա:—Ով կ'աշխատի, նա կ'ուտի—Ով ալարի, ոչ գալարի:

6. Բացատրեցէք հետեւեալ հանելուկները՝

Ա. Գրլուխս կտրեցին, սրտիկս հանեցին, գինի խըմացրին, լեզուս բացուեցաւ, խօսիլ ըսկսաւ:

Բ. Քանի որ ծեծը կ'ուտէր, ուրախութեամբ կրպլտտէր, երբ-որ ծեծը վերջացաւ, ընկաւ գետին ու մեռաւ:

7. Դ Ա Ս Ա Տ Ո Ի Ն

Դասատան մէջ նստած են աշակերտները: Աշակերտների առաջ նստած է վարժապետը: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սովորում են: Երբ-որ վարժապետը ներս է մտնում, աշակերտները ոտի են կանգնում և աղօթում են: Աշակերտները դասատանը կարդում են, գրում

են, հաշուամ են թւերով, երբեմն էլ նկարում են: Աշակերտների դիմացը դրած է մի մեծ գրատախտակ: Գրատախտակի մօտ դրած է կաւիճ և ըսպունգ: Գրասեղանների վրայ դրած են դասական առարկաներ:

8. Հ Ր Ա Ի Է Ր

Ձանգը տըւին, դէհ, շուտ արէք,
Խաղալիքներ մի կողմ դրէք.
Մի կողմ դրէք գընդակ, չըւան,
Խաղատիկին, հոլ, խարազան.
Մըտէք, մըտէք դուք դասատուն,
Մինչ չի եկել ձեր դասատու-ն:

9. ՄԻԱՄԻՆ ԼԱԻ Է, ՋՈԿ-ՋՈԿ ՅԱԻ Է

«Վարդանիկ եղբայր, խաղանք միասին»:
— Լաւ, արի խաղանք, Սաթինիկ անգին:
«Ես կ'առնեմ հոլս, գընդակ, խարազան»:
— Իսկ ես տիկնիկս, օղակ ու չըւան:

Այսպէս խօսեցին Վարդանիկն ու Սաթինիկը և միասին իջան պարտէզ՝ խաղ անելու: Սկզբում խաղը լաւ էր գնում. նրանք փոխ-առ-փոխ թուչկոտում էին չըւանով, գընդակի էին տալիս, օղակ էին գցում ու բռնում... Յետոյ Սաթինիկը գրկեց իր խաղատիկինն ու սկսեց նրա հետ պար գալ: Վարդանիկն էլ սկսեց խարազանով

իւր հոլը պտտացնել: Մէկ էլ՝ եղբայրը գոռաց Սաթինիկի վերայ. «Հեռու կաց, ինչ ես ոտիս տակն ընկնում»:

— Դու կուպիտ ես, Վարդանիկ, պատասխանեց Սաթինիկը և անցաւ պարտիզի միւս ծայրը: — Մանուկները սկսեցին ջոկ-ջոկ խաղ անել: Բայց մենակ սկսած խաղը երկար չքաշեց. միքանի ըոպէից յետոյ նրանք տխուր-տրտում յետ դարձան տուն:



Բառեր՝ գըշահատ—գմելին, գրիչ կտրելու դանակ, կաւիճ—մէլ, հոլ—բզզան, վալչօկ, խարազան—մտրակ, լախտ, չւան—թուկ, որով մանուկները թուչկոտում են, օղակ—չըւանակաձև խաղալիք, սէրսօ, չիլիկ, չիլիկափայտ—փոքր ու մեծ փայտէ ձողիկներ, որոնցով գիւղական մանուկները խաղում են:

Իրիչ—քլուանգ, կիրկա, ճանպայ—ճանապարհ, վաստակ—աշխատանք, օգուտ, մանկանց համար—մանուկների, տղաների համար: Ալարել—ծուլանալ, ալարի—ծուլանայ, դալարել—կանաչել, զօրանալ, դալարի—կանաչի: Դասատուն—դասարան, դասատու—դաս տուող, ուսուցիչ, դասատուն—դաս տուողը:

Ուսուցիչս խրատանչիւր մանրաւոցանից չոկում է անհասկանալի բառեր եւ առակեցների հետ կազմում է այսպիսի բառացուցակ:



14. Բացատրեցէք հետեւեալ հանելուկները՝

Ա. Ճերմակ տակաոփիկ, մէջն երկու կերպ ըմպելիք:

Բ. Օրան-օրան շուռ է գալիս, ոտներ չունի, ման է գալիս, բերան չունի, կուլ է տալիս:

15. Հ Ա Յ Ե Ի Ջ Ո Ի Ր

I. Մարդուս գլխաւոր ուտելիքը հացն է: Հացը պատրաստում են ալիւրից: Առաջ ալիւրը մաղում են, յետոյ տաք ջրով շաղախում, խմոր են շինում: Խմորը շաղախելիս՝ հետը թըթ-խմոր են խառնում: Թըթ-խմորին ասում են խաշ: Չաղախած խմորը լմու հունցում են և ծածկում: Հունցած խմորը քիչ-քիչ քացախում է տաշտի մէջ՝ գալիս է: Տանտիկինը վերցնում է եկած խմորը, գնդում է և այդ գնդերից հաց է թխում թոնրի կամ հնոցի մէջ: Հնոցին փուռն են ասում:

II. Ջուրը մարդիկ չեն պատրաստում: Նա այնքան հարկաւոր է, որ Աստուած ինքը առատութեամբ բաշխում է հարուստին էլ, աղքատին էլ: Մարդիկ խմելու ջուրը վեր են առնում աղբիւրներից և գետերից: Ուր-որ աղբիւր կամ գետ չկայ, մարդիկ գետինը խոր քանդում են, ջրհոր են շինում և այդ ջրհորի ջուրն են խմում: Առանց ջրի մարդ չի կարող ապրել. կենդանիներն էլ կրկոտորուին, եթէ ջուր չլինի:

10. Ուտելիք*)՝ հաց, պանիր, արգանակ, սպաս, կաթ-նեսպաս, թանեսպաս, փլաւ, չիւրթմայ, դօլմայ, կոլլակ—քիւլթայ, գիշերեփուկ—հարիսայ, կարկանդակ—պիրաժօկ, կուտապ—պիրօգ...

11. Խմելիք՝ ջուր, կաթ, թէյ, սուրճ, գինի, գարեջուր...

12. Գրեցէք ձեր տետրակների վերայ՝ Հացն ուտելիք է: Ջուրը խմելիք է: Գրելը... գնդակը... կաթը... մատիտը... պանիրը... թէյը... գաթան... գինին... խղը... հոլը... քարետախտակը...

13. Սովորեցէք եւ գրեցէք հետեւեալ առածները՝ Հաց ու պանիր, կեր ու բանիր.—Աղ ու հաց, սիրտը բաց:—Մի բաժակ ջուր, ով ուզի տուր:—Հացն ուտելով, բանն անելով:—Հացի կտրածը թուրը չի կտրել:

*) Ուտելիքը բացաւրում է՝
 ա. Խմոր, խմորեղէն՝ հաց, բոքոն, լաւաշ, բաղարջ, կաթ-նահունց, բլիթ, իւղաբլիթ, գաթայ, պաքսիմատ—սուխարի:
 բ. Կաթ, կաթնեղէն՝ մածուն, սեր, կարագ, թան, շոր, իւղ պանիր...
 գ. Միս, մսեղէն՝ արգանակ—բուլիժն, սպաս—սուպ, խորոված, տապակած...

16. ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ՝

Բարերար Աստուած և ողորմած Տէր,
Պահիր, պահպանիր Դու մեզ այս գիշեր,
Որ առաւօտեան երբ-որ վեր կենանք,
Քո Սուրբ Անունիդ ամենքըս փառք տանք:

17. ԵՐԿՈՒ ԱՔԱՂԱՂ


Երկու արագաղ կուեցին և մէկը միւսին
զօռ արաւ: Յաղթուողը, արին-լուայ, փախաւ,
թագ կացաւ, իսկ յաղթողը հպարտացաւ, թևերը
թափեթափ տրւեց և կանչեց՝ ծճւղրճւղրճւղր:

Արծրւին դուր չեկաւ արլարի գոռոգութիւնը,
նետի պէս վրայ տրւեց երկրնքից, ճանկերի մէջ
առաւ նրան և տարաւ, անուշ արաւ:

18. Ա Ք Ա Ղ Ա Ղ

Դու ինձ ասան, արագաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր միրուքիդ մատաղ,
Ինչի՞ ես շատ արթնանում,
Բարձր-բարձր երգ պսում,
Քաղցր բունս խանդարում:

*) Ուսուցիչը միանգամ էլ յիշեցնում է, որ յ կարդացում է որպէս կիսաձայն ի (ուսաց ի) և աւերացնում է, որ այս կիսաձայնաւոր տառի գլխատառը նոյնն է, ինչ որ բաղաձայն յ-ինը՝ ե-րե-կոյ-եան = ե-րե-կոյ-եան:



ՄԱՆՐԱՇՐՋԱՆ Գ. *)

19. Շինութիւններ՝ տուն, խրճիթ, գոմ, ջաղաց, դըպ-
րոց, պալատ, եկեղեցի...

20. Կառքեր եւ նաւեր՝ սայլ, սայլակ, սահնակ, կառք,
շոգեկառք, քարշեակ, հանրակառք, շոգենաւ, առագաստա-
նաւ, նաւակ, մակոյի...

21. Տունը շինութիւն է: Սահնակը... տետրակը...
Փայտօնը... լաւաշը... սայլակը... պալատը... գրչամանը...
գարեջուրը... ֆուրգօնը... ուսումնարանը... կաթը... կաթ-
նահունցը...

22. Առածներ՝ Մինչև սայլը շուռ չի անցնի, ճանպէն
չի դրըստուիլ: — Իմացողին մին, չիմացողին հագար ու մին:

23. Հանելուկ՝ Չորս եղբայր են շատ նման, չորսն էլ
շարժուն, գընացկան. փոքրերն առաջ զուգընթաց գլորում
են սրտաբաց. իսկ մեծերը բարկանում, յետքից վազում,
չեն հասնում:

*) Ուսուցիչը բացատրում է՝
ա. Շէն, շինել, շինած, շէնք, շինութիւն:
բ. Շոգի-նաւ, շոգենաւ. շոգի-կառք, շոգեկառք:
գ. Սահ, սահիլ, սահուն, սահնակ — սայլակ առանց անիւների:
դ. Քաշ — քարշ, քաշել — քարշել, ձիաքարշ, էլեքարաքարշ —
քարշեակ:

24. Մ Ե Ր Տ Ո Ի Ն Ը

Մեր տունը մեծ չէ. նա երեք սենեակ ունի
և մի խոհանոց: Սենեակներից մէկում մենք դաս
ենք սովորում. երկրորդ սենեակում ճաշում ենք.
Նրա մէջ դարսած են շատ աթոռներ, մի մեծ
սեղան և մի պահարան: Ամենից մեծ սենեակում
մենք քնում ենք: Դա կոչւում է ննջարան:

Մեր տան բակը շատ մեծ է: Բակի աջ կող-
մը փոքրիկ պարտէզ կայ. իսկ ձախ կողմը շի-
նած է գոմը: Բակումն է լինում մեր տան հա-
ւատարիմ պահապանը՝ շունը:

25. ԱՌՄԻՕՏԵԱՆ ԱՂՕԹԹ

Եկէք, մանուկներ, փառք տանք Աստուծուն,
Որ մեր աչերին տըւաւ հանգիստ քուն,
Որ առաւօտեան սիրունիկ արև
Տաք տաք շողերով բերաւ մեզ բարև:
Եկէք, ընկերներ փառք տանք մեր Տէրին,
Որ արժանացանք այս պայծառ օրին:

26. ԿԱՏՈՒԻ ԽՐԱՏԸ

Որսի շունը մի նապաստակ էր բռնել: Վա-
տան տեսաւ և ասաց. «Ի՛նչ անգութն ես. մեղք
է, բայց թող»:

Այդ միջոցին մի փոքրիկ մուկը անցաւ նրանց
մօտից:

Վատուն վրայ վազեց, բռնեց և խեղդեց:
«Այդ ի՛նչ արիւր, ասաց շունը. մեղք գործե-
ցիր, ընկեր»:

— Ոչինչ, պատասխանեց կատուն. իմ խեղ-
դածը մի շնչին մուկն էր միայն:


27. ՆԱՊԱՍՏԱԿ

Մի վագիր այդչափ արագ,
Ի՛մ սիրունիկ նապաստակ,
Չատ պըստիկ ես տակաւին,
Թաթիկներդ կը յոգնին:

Քեզ կըբերեմ կաթն ու հաց,
Չաքրեջրով համեմած,
Ուտես, խմես, զօրանաս,
Բանից կարօտ չըմնաս:

Ծանր-ծանր կըքայլես,
Սիրտըս վեր-վեր կըհանես.
Կ'արձակեմ քեզ, երբ ուզես,
Կ'երթաս, ազատ կ'արածես:





ՄԱՆՈՒՇՈՐՁԱՆ Դ. *)

28. Գործիք՝ գդալ, դանակ, պատառաքաղ, թուր, դուր, հրացան, մանգաղ, քորոց, արօր...

29. Սարք՝ կապ, սանձ, երասան, թամբ, փորքաշ, ասպանդակ, խամաթ...

30. Դանակը գործիք է, իսկ սանձը... Սայլը կառք է, իսկ արտը... Կաթը խմելիք է, իսկ մածուկը... Թամբը սարք է, իսկ մանգաղը... Ուրագը գործիք է, իսկ փորքաշը... մկրատը... մուրճը... սուրճը... երասանը...

31. Առածներ՝ Բզի գլխին բռունցքով տալ չի լինիլ՝ — Ուրագն իր կոթը չի տաշիլ:

32. Հանելուկներ՝ Ա. Տապանը փայտ է, մեռելն երկաթ է, երբ որ ձայն կրտայ, աշխարհ կըթընգայ:
Բ. Փթած փայտը փորեցին, առւծը մէջը թաղեցին:

*) Ուսուցիչը բացատրում է՝

ա. Գործ, գործել, գործող, գործի—գործիք:

բ. Երկիր, երկրագործ, երկրագործի—երկրագործական:

գ. Երկրագործական գործիք՝ գութան, ցաքան, եղան, մանգաղ, գերանդի...

դ. Դերձակի գործիք՝ ասեղ, քորոց, մկրատ, մասնոց, հարթուկ...

ե. Դարբնի գործիք՝ մուրճ, սալ, ունելիք, կուս...

զ. Հիւսնի գործիք՝ ուրագ, կացին, սղոց, դուր...

33. Մ Ե Ր Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Ես մի փոքրիկ երեխայ եմ: Ես ունիմ հայր ու մայր: Հայրս ու մայրս ինձ շատ են սիրում: Ես երկու քոյր և մի եղբայր էլ ունիմ: Ծնողքս նրանց էլ են շատ սիրում: Հայրս ու մայրս մեզ կերակրում են: Նրանք մեզ պահում պահպանում են: Մենք շատ ենք սիրում մեր ծնողներին և նրանց պատուէրները կատարում ենք:

34. ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏՈՒԱԾ Է

Փայլուն արևը արգէն մայր մտաւ.
Լուսինն էլ վաղուց գնաց, թագ կացաւ.
Փոքրիկ աստղերը ամպի տակ մըտան.
Եւ ցաւրա ու խաւար գիշեր էր աշնան:
Ամեն մարդ գնաց, իր տունը հասաւ.
Ամեն երեխայ մօր գիրկը մտաւ.
Միայն խեղճ որբը չունի հայր ու մայր,
Չունի բարեկամ, ոչ քոյր, ոչ եղբայր.
Անտէր մընացած, Աստուծոյ կամքին,
Խեղճը ննջում է փողոցի միջին:

35. ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔ Է

Ի. Քոյր ու եղբայր այգի գնացին: Եղբայրը խակ պտուղներ էր ուտում: «Մի ուտիր, Պետօ, ասում էր քոյրը. վնաս կըտայ, մի ուտիր»:
Պետրոսն ականջ չարեց, խակ պտուղներ կե-

րաւ, հիւանդացաւ: Քոյրը նրան անանուխի կաթիլներ խմացրեց, մանանեխ շաղախեց, փորին զրեց և ցաւն անց կացաւ:

II. Մի օր էլ նրանք հանդը զնացին: Եղբայրը վազվզեց, թռչ-կոտաց, քրտնեց և մօտեցաւ աղբիւրին, որ սառը ջուր խմէ: «Մի խմիր, ասաց Մարիամը, թող քրտինքդ ցամաքի, յետոյ կրխմես»:

Եղբայրն ականջ չարեց. սառը ջուրը խմեց, մրրսեց և սկսեց զողացնել: Բժիշկն եկաւ և Պետրոսի համար դառը զեղ զրեց:

III. Չմեռնաղէմ Պետրոսն ու Մարիամը զընացին գետի ափը ման գալու: Գետը ծածկուել էր բարակ սառուցով: «Մարօ, ես ուզում եմ սառուցի վրայ սղղամ, խաղամ»:— Զէ, Պետօ, մի սղղար. սառուցը բարակ է, կրկոտրուի, ջուրը կ'ընկնես», ասաց Մարիամը: Պետրոսը այս անգամ էլ ականջ չզրեց քրոջ խրատին և թըռաւ—սղղաց սառուցի վրայ: Յանկարծ սառուցը կոտրուեց և մեր անհամբեր մանուկը ջրի մէջն ընկաւ ու խեղզուեց:



36. Կարասիք*) Սեղան, աթոռ, բազկաթոռ, օրօրոց, պահարան, նստարան, գահաւորակ, ընկողմարան...

37. Ամանեղէն՝ Կուժ, կուլայ, կճուճ, քոցի, կարաս, բաժակ, սրուակ, կաթսայ, թաւայ, ափսէ, գաւաթ...

38. Սեղանը կարասիք է, իսկ գաւաթը աման է: Կուժը աման է, իսկ գահաւորակը... Տունը շինութիւն է, իսկ ձիաքարշը... Օրօրոցը կարասիք է, իսկ շիշը... Կարկանդակը ուտելիք է, իսկ կաթսան... Մառանը կարասիք է, իսկ գաւաթը... Մարագը շինութիւն է, իսկ ընկողմարանը...

39. Առաձներ՝ Աւելորդ կահ-կարասի, պատճառ է շատ փեսի:— Այ կուժ, քեզ ասեմ, այ կուլայ, դու իմացիր:— Մի բաժակ ջուր, ով ուզի, տո՛ւր:

*) Ուտուցիչը բացատրում է՝

ա. Գահ—պատուաւոր աթոռ. գահաւորակ—պատուաւոր թախտ. բազմոց—պատուաւոր նստարան. ընկողմարան—կուշէտ. բազուկ—կուռը. բազկաթոռ—կոներաւոր աթոռ. մահիճ—անկողին. մահճակալ—անկողնակալ, կարաւաթ. պահարան—շկաֆ. մառան—բուֆետ:

բ. Գաւաթ—քրեղան. ափսէ—թէփշի խոր և երես. սինի—պղնձէ բլիւզ. տեփուր—փայտէ սինի. խոնչայ—երկար տեփուր. սկուտեղ—բլիւզ. կաթսայ—ղաղան. հեշտաեռ—սամօվար:

40. Հանելուկներ՝ Չորս եղբայր մի գրակի տակ, կարծում եմ թէ չըգտաք:—Վերևից երթիկ, ներքևից դռնակ, մէջտեղումը շուր ու կրակ:

41. Ա. Թ. Ո. Ռ. Ե. Ի. Գ. Ա. Ի. Ա. Թ.

Աթոռը շինում են փայտից: Աթոռն ունի չորս ոտք, նստատեղ և թիկունք: Նստատեղը հիտած է ծղօտից, բայց տախտակից կամ փափուկ կտորից էլ է լինում: Աթոռ շինողին ատաղձագործ են ասում:

Գաւաթը շինում են կաւից: Կաւը բարակ մաղում են, շաղախում, հունցում և ուզած ձևը տալիս: Չաղախը ցամաքում է արևի տակ: Յամաքած գաւաթները դնում են հնոցի մէջ և սաստիկ կրակ են վառում տակը: Տաքութիւնից կաւը կարծրանում է: Գաւաթ շինողին բրուս են ասում:

42. Ա. Ր. Ե. Ի.

«Ա՛րև, ա՛րև, դուրս արի,
Քեզ բերել ենք աչքալոյս.
Քո քարիկը՝ լուսընկան,
Բերաւ շամիչ մէկ աման.
Ամպը եկաւ, մութ արաւ,
Արևն աչքերէս կորաւ:

Բայց երեսըդ, ա՛րեգակ,
Մէկ բուռ շամիչ քեզ կըտանք»:
—Օխ՛, արևին խաբեցինք,
Ամպի տակից հանեցինք:

43. Լ. Ե. Ի. Ո. Ն. Ի. Վ. Ա. Խ. Ը.

Լեռներ վախկոտ տղայ չէր, բայց հաւատում էր դատարկ բաների: Մի երեկոյ նա միժնով տուն եկաւ: Տանը մարդ չկար: Վառարանի մօտ դրած էր խմորի տաշտը. մայրը խաշ էր արել, դրել էր կրակի մօտ, որ քացախի: Լեռներ մօտեցաւ կրակին: Այդտեղ մի բան պրծալընում էր, ձայն էր հանում: Լեռներ մտածեց. «Քաջք կըլինի»: Նա ուզեց հեռանալ. բայց հակառակի պէս կրակախառնին ոտի տակն ընկաւ, ծայրը դիպաւ ճակատին: «Քա՛ջքը», գոռաց Լեռներ և դուրս թռաւ սենեակից. բայց դուրս փախչելիս՝ տրեխի ծուպը դռան տակովն եղաւ:


Լեռներ փուռեց շէմքի վրայ. «Վա՛յ, նա՛նի, վա՛յ, օգնեցէք, ապատեցէք, քաջքերը բռնել են ինձ»:

Գրացիք լսեցին Լեռնի ձայնը, եկան, բարձրացրին կիսակենդան տղային: Յետոյ ինքը Լեռնն էլ շատ ամաչեց, երբ նրան հասկացրին, թէ ինչ դատարկ բաներից է վախեցել:

44. Ես շատ եմ սիրում, երբ ձին է գալիս.
 Տաք հագնւում եմ, բազը վազ տալիս.
 Ընկերներիս հետ ձրնագունդ խաղում,
 Ազատ թըռչկոտում, խնդում, ծիծաղում...
 Բայց մի, մենք ունինք աղքատ ընկերներ.
 Նրանք բոբիկ են, չունին տաք շորեր:

45. Կատուն եկաւ, փիսիկ-փիսիկ,
 Հագար հագով, ինչպէս հարսիկ,
 Դունչը սըրբեց թաթիկներով,
 Մազը սանրեց շանչիկներով:
 — Կատու-կատու, է՛ր ես տըտում.
 Թէ՛ մկներն են այսօր արթուն:

46. «Բաղիկ-բաղիկ,
 Կարմիր թաթիկ,
 Ո՞ւր ես գնում կամաց-կամաց,
 Ձագուկներդ չորս կողմդ արած»:
 — Ես գնում եմ ջուր գտնելու,
 Ձագուկներս լըւանալու,
 Ձագուկներս մաքուր-մաքուր,
 Տղոց երեսն աղտ է ու մուր:



ՄԱՆՈՒՆՆԵՐ Զ. *)

47. Չորքոտանի կենդանիներ՝ Ձի, կով, ոչխար, գայլ,
 արջ, շուն, կատու, փիղ, առիծ...

48. Թռչուններ՝ Հաւ, սագ, ծիծեռնակ, սոխակ, ար-
 տուտ, ցին, բու, արծիւ, սիրամարգ...

49. Ձին և կովը ընտանի, չորքոտանի, խոտակեր
 կենդանիներ են, իսկ գայլը և արջը... առիծը և վագրը
 վայրենի, չորքոտանի, մսակեր կենդանիներ են, իսկ շունը
 և կատուն... Մազը և բազը ընտանի թռչուններ են, իսկ
 արծիւն ու բազէն... Ծիծեռնակն ու սոխակը վայրենի
 թռչուններ են, իսկ հաւը և հնդուհաւը...

50. Առածներ՝ Շան հետ ընկերացիր, փայտը ձեռիցդ
 մի՛ գցիր: — Գայլի անունն է կոտորած, աղէսը աշխարհ
 բանդեց: — Կատուն մսին չըհասաւ, այսօր ուրբաթ է, ասաւ:

51. Հանելու՛ Մէկ շէնք գիտեմ բարձր ու շարժուն,
 ներքէն ունի չորս հատ հաստ սիւն, մի դուռ փոքրիկ,
 նեղ, գալարուն, վրան շքեղ մի վերնատուն:

*) Ուսուցիչը բացատրում է՝
 ա. Տուն, տան, տանու—ընտանի. ընտանի կենդանի՝ ձի, կով,
 ոչխար, շուն, կատու...
 բ. Վայր—դուրս տեղ, վայրի—դրսի. վայրենի կենդանի՝ գայլ,
 եղնիկ, արջ, աղուէս...
 գ. Խոտ, կեր, խոտակեր. խոտակեր կենդանի՝ ոչխար, փիղ...
 դ. Միս, կեր, մսակեր. մսակեր կենդանի՝ կատու, առիծ...
 ե. Չորս—չորք, չորքոտանի. չորքոտանի կենդանի՝ այծ, խոզ...

52. ԱՂԻԷՄՆ ՈՒ ՃԱԳԱՐԸ

Աղւէսը վայրենի կենդանի է. նա միս է ուտում: Ճագարն էլ վայրենի կենդանի է, բայց խոտ է ուտում:

Աղւէսը գետինը ծակում է, իրան համար բուն է շինում: Ճագարն էլ է գետնի տակը բուն շինում:

Աղւէսի որջը մեծ է լինում և ունենում է շատ մուտքեր: Ճագարի որջը փոքր է լինում, որովհետև նա ինքն էլ փոքր է:

Աղւէսը ճագարին թշնամի է:

Մի անգամ աղւէսը մօտենում է ճագարի որջին և ասում է. «Ճագար, ինչի՞ ես խոր փոսի մէջ մտել. դուրս արի այդ մութ ծակից, արածիր պայծառ արևի տակ»:

— Ընորհակալ եմ, պատասխանում է ճագարը. երբ-որ այդտեղից կրհեռանաս, խրատդ կը լսեմ ու դուրս կըզամ: Բայց քանի որ այդտեղ ես, հանգիստ կընստեմ ընիս մէջ. քո բարեկամ մութիւնից ես միշտ փախչում եմ:

53. ՊԱՌԱԻՆ ՈՒ ԱՅԾԸ

Մի խղճուկ պառաւ կար շատ հին ժամանակ. նրա նիստ ու կացը պատմեմ, իմանաք.

Պատմեմ, պատմեմ, պատմեմ, իմանաք:

Պառաւը աղքատ էր, կով, գոմէշ չունէր. Դիփ եղած-չեղածը մի այծ, մի տուն էր: Մի այծ, մի այծ, մի այծ, մի տուն էր:

Տունն էլ մի ծակուռ էր, գետնի մէջ փորած. Ինքը մի խեղճ կընիկ, կորած-մոլորած. կորած, կորած, կորած-մոլորած:

Այծը նա պահպանեց ամբողջ ճրմեռը. Մօտիկցաւ գարունը, թեթեցաւ բեռը. Ի՛նչ լաւ, ի՛նչ լաւ, թեթեցաւ բեռը:

«Այժմ արօտ կ'երթանք, մազմըզոտ ընկեր. կ'ուտես կանաչ խոտը, թարմիկ, կաթնաբեր. Թարմիկ, թարմիկ, թարմիկ, կաթնաբեր»:

Դու ինձ կաթ կըբերես, կըհոգամ տունըս, կըծածկեմ մարդկանցից իմ խեղճութիւնըս. Հա-հա, հա-հա, իմ խեղճութիւնըս»:

Այսպէս խօսեց տատը մի լաւ առաւօտ, կաթնատու այծիկը դուրս տարաւ արօտ. Ուրախ-ուրախ դուրս տարաւ արօտ:

Բայց խեղճ կընոջ բաղդից քամի վերկացաւ, Ձիւն, բուք ու փոթորիկ չորս կողմ բարձրացաւ. Վայ-վայ, վո՛ւյ-վո՛ւյ, չորս կողմ բարձրացաւ:

Պառաւը մոլորուեց, այծը կորցրեց, Դայլը նըրան ճանկեց, փորը լճեցրեց. կերաւ, լափեց, փորը լճեցրեց:

Մեծ նանը տուն դարձաւ արցունքն աչերին, Այծից, կաթից զրկուած այն ցուրտ օրերին. Ախ-վախ, ախ-վախ, այն ցուրտ օրերին:

54. Ա Ր Տ Ո Ւ Տ Ը

Արտուտը բուն էր շինել մի հասկալի արտի մէջ
և ձագեր էր հանել: Մի օր մայրը ասում է իւր ձագերին.
«Երբ այս արտի տէրը արտը տեսներու կը գայ, դուք ականջ
դրէք, թէ ինչ կը խօսի և լսածներդ ինձ պատմեցէք»:

Առաջին անգամ ձագերն ականջ են դնում և պատ-
մում են, որ արտի տէրը եկաւ որդու հետ, մի հասկ տրո-
րեց ափի մէջ, նայեց հատիկներին և ասաց. «Որդի, արտը
հասնելուն մօտ է. գնա, խօսիր մեր դրացիներին, թող
գան, արտը միասին հնձենք»: — Մայրը պատասխանում է.
«Անհոգ կացէք, ձագերս, քանի որ արտի տէրը յոյսը դրա-
ցիներէ վրայ է դրել, արտը շատով չի հնձուիլ»:

Երկրորդ անգամ ձագերը պատմում են. «Արտի տէրը
եկաւ, արտին նայեց և ասաց. դրացիները չեկան. գնա,
որդի, մեր բարեկամներին հրաւիրիր, որ գան մեզ օգնեն,
արտը միասին հնձենք»:

Խելօք մայրը պատասխանում է. «Հանգիստ կարող
ենք ապրել մեր տեղը. արտը շատով չի հնձուիլ»:

Երրորդ անգամ ձագերը պատմում են, թէ արտի տէրը
որդուն ասաց. «Բարեկամներին ու դրացիներին սպասելը
իզուր անցաւ. վաղը վերցրու մանգաղդ և եկ, մեր արտը
հնձենք ես և դու»:

Մայրը պատասխանում է. «Այժմ հաւատում եմ, որ
արտը պիտի հնձուի. ուրեմն ուրիշ տեղ անցնենք»:



55. Չկնե՞ր*)՝ Կարմրախայտ, իշխան, տառեխ, գեղար-
քունի, օրագուլ, կապուտ (լօքօ)...

56. Սողուններ՝ Մողէս, օձ, գորտ, կրիայ:

57. Միջատներ՝ Ճանճ, մեղրաճանճ—մեղու, մրջին,
մորեխ, մոծակ, բզեզ, շերամ...

58. Օձը և մողէսը սողաններ են, իսկ շերամը և մե-
ղուն... Օրագուլը և կապուտը ձկներ են, իսկ մրջինը և
մորեխը... Կարմրախայտը և գեղարքունին... Մոծակը և
ճանճը... Ծուներ և կատուն... Գայլը և աղւէսը... Սիրա-
մարգը և հաւը...

59. Առածներ՝ Չուկը ջրումը գին չեն դնիլ:

60. Հանելուկ՝ Քարը քարի վրայ, քար չի. արածում
է, տաւար չի. ձու է ածում, հաւ չի:

*) Ուտուցիչը բացառում է՝

աւ. Խայտ—բիծ. կարմրախայտ—մանրաձուկը կարմիր բծե-
րով. գեղ—գեղեցկութիւն. արքայ—թագաւոր. արքունի—թագա-
ւորական. գեղարքունի—Գեղամայ լճի ձուկը, անուշ, կաթնահամ,
արքայավայել. իշխան—նոյն լճի ամենախոշոր ձուկը, միսը
կարմրաւուն. տառեխ—Վանայ լճի մանրաձուկը:

ը. Մող, սողալ, սողուն—սողացող, փորը գետնին քսելով
ման եկող կենդանի:

գ. Հատ—կտոր, մէջհատ, միջատ—մանրիկ կենդանիներ,
որոնց մարմինը մէջէ-մէջ կտրատուած է միքանի մասերի:

61. ՃԱՆՃԵՐՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

Ճանճերը գոր չէին իրանց կացած տեղից. նրանք խորհարդ արին, որ ուրիշ երկիր գնան: Բայց մենակ չէին ուզում գնալ. իրանցից մէկին ուղարկեցին մեղուի մօտ, որ նա էլ գայ:

«Մեղու եղբայր, ասաց ճանճը. չար մարդիկ մեզ դադար չեն տալիս. հերիք չէ, որ ամեն բան ծածկում են մեզանից, պատահաններումն էլ թոյն են դնում, որ ուտենք ու մեռնենք: Խըրճիթներում մեզ չեն նեղացնում մարդիկ. բայց այնտեղ էլ ուրիշ թշնամի ունինք՝ սարդերը ձգում են իրանց ոտտայնները, մեր ոտները մըճըճում են, մեզ խեղդում, մեր արիւնը ծծում: Արի, մեղու եղբայր, գնանք, հեռանանք այս տեղից»:

Մեղուն լսեց և պատասխանեց. «Դուք գնացէք, ուր որ կամենում էք. ես ձեր ընկերը չեմ. ինձ համար այստեղ էլ շատ լաւ է. ամենքը պատում են ինձ ու սիրում. ես էլ ամենքին օգուտ եմ տալիս. իմ մեղրը թէ՛ չար և թէ՛ բարի մարդու, թէ՛ հարուստի և թէ՛ աղքատի ճաշակը քաղցրացնում է. իմ տրւած մոմը Աստուծու տաճարն է լուսաւորում: Դուք գնացէք, ուր որ կամենում էք. միայն գիտենաք, որ ամեն տեղ էլ ձեզ կրհալածեն, որովհետև ոչ ոքի օգուտ չէք տալիս. բացի օգուտ չըրտալը, ձանձրացնում էլ էք»:


62. ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՃԸ

Մ Ե Ղ Ո Ւ Ն

Գարուն, ամառ, ամեն օր
ես գնում եմ դաշտ ու ձոր.
Աշխատում եմ ես անվերջ,
Մեղրը պըտրում ծաղկանց մէջ,
եւ գտածքս ես շիտակ
Իսկոյն տանում եմ փեթակ,
Որ երբ փըչէ ցուրտ քամին,
Ծաղիկները թառամին,
ես ձմեռը պաշարով
Լինիմ իսպառ ապահով:

Ճ Ա Ն Ճ Ը

Փոքրիկ ճանճ եմ գուարճասէր,
Միշտ թռչում եմ վայր ու վեր,
Մի հով տան մէջ, մի բակում,
Սաստիկ արևի տաքում.
Կերութումից, խաղից ջոկ
Իսկի չունիմ ուրիշ հոգ
եւ, ներկայով բաւական,
Միտք չեմ բերում ապագան:





63. Պտղատու ծառեր՝ Խնձորենի—խնձորի, տանձի,
լնկուզենի, թթենի, ծիրանի, նշենի...

64. Հասարակ ծառեր՝ սօսի, բարտի, եղենի, կաղնի...

65. Թփեր՝ Թզենի, խաղողի, վարդենի, մորենի...

66. Խոտաբոյսեր՝ սէզ (կանաչ խոտ), անանուխ, ուե-
հան, համեմ, կոտեմ, սամիթ, թրթնջուկ, ծնեբեկ...

67. Բանջարանոցի բոյսեր՝ կաղամբ, բոլկ, ճակըն-
դեղ, լոբի, սիսեռ, պատրիշան, վարունգ — խիար, ճմերուկ...

68. Հացաբոյսեր՝ ցորեն, գարի, հաճար, վարսակ,
բրինձ, կորեկ...

69. Ծաղիկներ՝ մանուշակ, նարգէս, շուշան, կակաչ...

70. Ծիրանի ծառ, բար մի՛ տալ,
Ճղներըդ իրար մի տալ,
Ամեն մօտովդ անցնելիս՝
Յաւերբս իրար մի տալ:

71. Մեր գլուանը խընկի ծառ,
Նախշան բլբուլ վրէն թառ,
Երթար ու գար, շորոր տար,
Սիրուն տըղիս օրօր տար:

72. Եյնեմ ծառը զարդարեմ,
Վեր գամ տակը՝ մխիթարեմ.
Հաւի վառիկը մորթեմ,
Տանեմ գետը, լըւանամ,
Եփեմ ու չորանին տամ.
Չորանն ինձ մի ոչխար տայ,
Ոչխարը Աստուծուն տամ.
Աստուած ինձ մի եղբայր տայ:
«Եղբայր-եղբայր, ջան եղբայր,
Չանրս քեզ մատաղ, եղբայր.
Կաբայ եմ կարել, կարճ է եկել,
Բուզմայ եմ շարել, խոչ է եկել,
Ճընձ-ղուկի լեզուն մեղրով
Քեզ համար եմ տապակել»:


73. Խնձորենին պտղատու ծառ է, իսկ նշենին...
Վարդը ծաղիկ է, իսկ վարդենին... Լորը թռչուն է, իսկ
լորենին... Յամիկը ծաղիկ է, իսկ գարին... Յորենը հա-
ցաբոյս է, իսկ առւոյտը... Թրթնջուկը խոտաբոյս է, իսկ
կաղամբը... Բոլկը բանջարանոցի բոյս է, իսկ հաճարը...
Կակաչը ծաղիկ է, իսկ ուեհանը...

74. Առածներ՝ Պտղատու ծառը գլուխը կախ կը պահի:
— Քանց պուտը կարմիր չկայ, որ ճղես՝ սիրտը սև է:
Մի ծաղկով գարունք չի լինիլ:

75. Հանելուկներ՝ Բ. է նա կանաչ կոճակ կոլոր, քաղցը
հիթով լցուած աիճոր. կարմիր մեղուք ներսը բոլոր. որ-
դեակ, դու կեր իբր մեղրի ծոր: — Բ. Ոսկէ կճուճիկ, միջուկն
անուշիկ: — Գ. Բռնեմ ափովս, շաղ տամ թաթովրս, մեռնի
տարով, ապրի բարով:

76. ՄԱՆՈՒՇԱԿ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով
 Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
 Թէև տունկըս փոքրիկ է, ցած,
 Արօտներում միշտ թագկացած,
 Բայց իմ փունջըս ամենի տան՝
 Թէ աղքատի, թէ մեծատան,
 Իբրև գարնան առաջին զարդ,
 Կարէ տեսնել ամեն մի մարդ.
 Ես եմ սիրուն գարնան գուշակ.
 Իմ անունս է մանուշակ:



77. ՅՈՐԵՆ ԵՒ ԳԱՐԻ

Գլխացին երկու օրավար հող ունէր: Մի օրավարում նա ցորեն ցանեց, միւսում գարի: Արտերն աճեցին, բարձրացան, հասկեր զցեցին: Մի օր գարին սկսեց խօսել. «Յորեն եղբայր, ասաց նա. վատ տեղ է ցանել մեզ մեր տէրը. այս գիւղը շատ աղքատիկ է՝ ոչ ոսկի ունի, ոչ արծաթ. ո՞վ պէտք է մեր յարգը ճանաչէ, մեզ զին տայ. արի՛, ցորեն եղբայր, թողենք, հեռանանք այս գիւղից. արի՛ զնանք այնտեղ, ուր ոսկի շատ կայ»:

Յորենը լսեց դրացու խօսքերը և ասաց. «Շատ անտուամ եմ, գարի՛ եղբայր, որ միայն քիստող ես երկարացրել, իսկ խելքդ կարճ է մնացել. ինչի՞ մենք ման գանք ոսկու ետևից. մեր արժէքն այնքան մեծ է, որ ոսկին իրան-իրան մեր դուռը կըգայ»:

78. ԳԻՒՂԱՅԻՆ Ո՞ՆՅ Է ԱՆՈՒՄ *

(Մանկական խաղ)

- Ա. խումբ. Գլխացին ո՞նց է անում՝ իւր արտումը բանելիս, արիւն-քրտինք թափելիս, երբ-որ ցորեն է ցանում, — գլխացին ո՞նց է անում:
- Բ. խումբ. Ահա այսպէս անում է, երբ ցորենը ցանում է՝
 Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛. լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛:
- Ա. խումբ. Գլխացին ո՞նց է անում, իւր արտումը բանելիս, սիրուն ցորենն հընձելիս, աշխատելով անդադրում, — գլխացին ո՞նց է անում:
- Բ. խումբ. Ահա այսպէս անում է, երբ ցորենը հընձում է՝
 Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛. լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛:
- Ա. խումբ. Գլխացին ո՞նց է անում, երբ անհամար խըրձերը ծածկում են իւր արտերը, երբ իւր խրձերն է կրում, — գլխացին ո՞նց է անում:
- Բ. խումբ. Ահա այսպէս անում է, երբ խրձերը տանում է՝
 Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛. լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛:
- Ա. խումբ. Գլխացին ո՞նց է անում, արտիցը ետ դառնալով, իւր կալը լի խրձերով, երբ իւր ցորենն է կամ-նում — գլխացին ո՞նց է անում:

*) Մանուկները բաժանւում են երկու խմբի և հարց ու պատասխանի ձևով ներկայացնում են երկրագործ գլխացու գործողութիւնը վարուցանքի ժամանակ:

Բ. խումբ. Ահա այսպէս անում է, երբ ցորենը կամնում է՝
Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛. լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛:

Ա. խումբ. Գիւղացին ո՞նց է անում, իւր խրճիթը ետ գա-
լիս, պարզ անկողին մտնելիս, բուք քամուց
անհոգ լինում, — գիւղացին ո՞նց է քնում:

Բ. խումբ. Այսպէս քնում է խաղաղ, սիրտը հանգիստ և ուրախ.
Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛. լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛:

Բոլ. միաս. Ապա անհոգ գիւղացին՝ յետ ծանր աշխատանքին,
նոր ոյժ, նոր սիրտ է առնում, զբօսնում ու երգում՝
Լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛. լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛, լա՛:

79. Ա Ն Ձ Ր Ե Ի

Անձրև՝—անձրև, ցած արի,
Բըսցո՛ւր ցորեն ու գարի,
Բըսցո՛ւր ծաղիկ, կանաչ խոտ,
Աւէ՛ փոշի, մաքրէ՛ օդ.
Անձրև՝—անձրև, ցած արի,
Գալըդ ամենիս բարի:


80. ՆՈՒՐԻՆ (Անձրեաքեր)


Նուրին-Նուրին եկել է,
Աջբա-Հուրին եկել է,
Շիրայ շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կապել է:

Ե՛ղ բերէք, վարսը քսենք.
Ջո՛ւր բերէք, գլխին ածենք.
Մեր Նուրինի փայլ առէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք:

81. ՃՕԼԻ (Արեւաքեր)

Ճօլի-Ճօլի, ճօլ չըկայ,
Խաւիժ անեմ, եղ չըկայ,
Ճօլին ընկել է ծովը,
Ծովիցը հանող չըկայ:
Չըւան բերէք, դուրս հանենք,
Թո՛ւկ բերէք, կցան անենք,
Չո՛ւ բերէք, թաթին դնենք,
Ե՛ղ բերէք, վարսին քսենք:
Խոփը պատումս է ժանգոտել,
Չեիչը տափումս է ժանգոտել,
Կանաչ դաշտերին ենք կարօտ,
Կարմիր արևին ենք կարօտ:





87. Առաձներ՝ Սարը սարին չի դիպչիլ, մարդը մարդին կը դիպչի: — Աստուած ձեռք է տըլել բան շինելու համար: — Մի ձեռը ծափ չի տալ:

88. Հանելուկ՝ Չորս մայր կային նմանակ, ունէին հինգ-հինգ զաւակ. հինգը մէկ մօր էին որդիք, հինգը նրանց եղբօր որդիք. տասն էլ հօրեղբօր որդիք:

89. ԵՐԿՈՒ ԶԱՓԻՐ, ՄԻՆ ԿՏՐԻՐ

Երբ-որ Աստուած քեզ ըստեղծեց, անուշիկ, Լեզու տըլեց և երկու աչք քընքուշիկ. Երկու աչքով դու կը տեսնես ամեն բան, Իսկ տեսածը մեզ կը պատմես մի անգամ:

Տէրը տըլեց քեզ ականջներ ու շաղիբ. Երկու հատ են, որ ասել է՝ լաւ լսիբ. Իսկ լսածը, իմացածը պատմելու, Աստուած տըլեց քեզ մի բերան, մի լեզու:

Որ հոտ քաշես, բան ու վատը իմանաս, Լաւն ընդունես, վատից փախչես, հեռանաս, Տէրը տըլեց հոտոտելիք մի ջուխտ քեզ, Իսկ մի բերան՝ իմացածը մեզ պատմես:

Տես, թէ քանի ուժեղ ոտներ դու ունիս, Պիտի ման գաս, շատ բան տեսնես, շատ սովըիս, Բայց բերանըդ, լեզուդ մէկ է, գիտենաս, Քիչ պիտ' խօսես, որքան էլ շատ իմանաս:

Երկու գօրեղ բազուկներըդ որ շարժես, Ի՛նչ հրաշքներ, ի՛նչքան բարիք կը գործես. Բայց գործածը պարծենալով պատմելու Քեզ չէ տըլած երկու բերան, երկ' լեզու:

82. Կարդացէք եւ ըացատրեցէք՝

Ես յարգում եմ ձերունի քահանային: — Գիւղացին յարդը ածեց մարազը: — Հայրը Յուսիկին յունսպ տըլեց: — Քոյր ու եղբայր այգի գնացին: — Արծիւն ու առիւծը գիշատիչ կենդանիներ են: — Սկիւռը ծառի փշակում ընկոյզ էր կռծում: — Տանտիկինը սպիտակ ալիւրից գաթայ թխեց: — Այս աշակերտը այսօր յետ մնաց իւր ընկերներից...

83. Մարդու մարմնի անդամները՝ գըլուխ, պարանոց (վիզ), բուն, ձեռներ, ոտներ:

84. Գլխի մասերը՝ գագաթ, ծոծրակ, բունք, ճակատ, դէմք:

85. Դէմքի մասերը՝ յօնքեր, աչքեր, քիթ, թշեր, բերան, ծնօտ:

86. Բնի մասերը՝ կուրծք, փոր, կողեր, թիկունք, մէջք:

*) Մինչև այս մանրաշրջանին հասնիլը մանուկներն արդէն ընտելացած պիտի լինին ազատ ու անսխալ կարգալ-գրելուն. այսուհետև մենք ու, յ, ի հնչիւնների նշանագրերը տալիս ենք իրանց սովորական ձևով, թէև շատ կըցանկանայինք, որ այս վերջիններս միանգամ ընդմիշտ տեղի տային առաջիններին:

90. Ո Չ Խ Ա Ր

I. Գարնան վերջերում հովիւը խուզեց իւր ոչխարները: Դեռ ցուրտ էր և խեղճ կենդանիները դողդողում էին:

Աստուած խղճաց ոչխարներին և աշխարհ ուղարկեց արևի տաք ճառագայթներ ու ջերմ քամի: Ոչխարները տաքացան և ուրախ-ուրախ վազեցին դէպի դաշտ. իսկ աշունքադէմ նրանց բուրդը նորից դուրս եկաւ:

II. Մանուկներն ամբողջ ամառ ուրախ-զըւարթ խաղում էին: Ձմեռն եկաւ և նրանք չկարողացան առաջուայ պէս շուտ-շուտ դուրս վազել: Տխուր նստած էին լուսամտի առաջ և նայում էին դէպի դուրս. դուրսն էլ ձիւնը քուլայ-քուլայ էր անում:

III. Աշնան ազատ օրերին մայրը ոչխարի բրդից թել էր մանել, շալ էր գործել. այդ թելից այժմ նա գուլպաներ ու թաթմաններ արաւ. շալից էլ շորեր կարեց:

Մանուկները տաք հագնուեցան, համարձակ դուրս վազեցին և ուրախ-զըւարթ սկսեցին ձնագընդի խաղալ:

91. ՈՍԿԻՆ ԵՒ ԵՐԿԱԹՐ

Ոսկին և Երկաթը վիճում էին միմեանց հետ:

«Ես ամենից լաւ մետաղն եմ, ասում էր ոսկին. ամենքը գովում են ինձ, պատիւ են տալիս. ամենքը սիրում են ինձ. մարդկանց համար ես փող էլ եմ, զարդարանք էլ. ինձանից շինում են՝ սիրուն շղթաներ, թանկագին մանեակներ, մատանիք, քորոցներ... Էհ, էլ ի՞նչ երկարացնեմ. առանց ինձ մարդու կեանքը կեանք չէ, այլ տանջանք է: Եթէ ուզենամ, ամբողջ աշխարհը մենակ կը գնեմ»:

Երկաթն ասաց. «Շատ ես պարծենում, սակի աղայ, և իրաւունք էլ ունիս. մարդիկ քեզ շատ են երես տալիս. Բայց մենակ դու չես աշխարհի տէրը. երբ մարդս ուզում

է ապահով ապրել, նրան երկաթ է հարկաւոր. տուն շինելու համար ոսկէ կացնով չեն կարում փայտը. հաց ունենալու համար ոսկէ արօրով չեն վարում հողը. գազաններից պաշտպանուելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում: Թէև դու, աղա ջան, կարող ես աշխարհ գնել, բայց ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել»:

92. Հանելուկներ՝ Ա. Երկու եղբայր խիստ որոնուած, երկուսն էլ մէկ մօրից ծնուած. մեծի փոքր է պատիւն ու գին, փոքրը յարգի ու թանկագին:

Բ. Կլորակ, դեղին, աշխարհի սիրելին:

93. Յ Ո Պ Ո Պ Ի Կ Ը

Գեղեցիկ նորահարսը մենակ նստած էր խրճիթի մէջ և սանրում էր մազերը: «Ձարմանք բան է մեր բանը. աշխարհումս ամեն կենդանի իրաւունք ունի ուզած ժամանակ ձայն հանել՝ կովը բառաչում է, ոչխարը մայում, ծիւղը ծըլւըլում, բզէզը բզզում, միայն մենք ենք, որ իրաւունքից զուրկ ուրիշի առաջ խօսել չենք կարում», ասում էր հարսը ու մեղմիկ երգում: Յանկարծ այդ ժամին նրա պատրոնը դուռը բացում է ու կամաց մտնում: «Անամօթ աղջիկ, այդ ի՞նչ ես անում, սում հետ ես խօսում, ինչի՞ ես երգում»:

Հարսը զարհուրեց, լեզուն փորն ընկաւ. «յօ-յօ-պօպ-պօպ, կիսաձայն ասաւ. գետինը պատռէր, մէջը մասնէի, որ մեծիս առաջ ձայն չըհանէի»:

— Յուպոպ դառնաս, անամօթ հարս:

Խստասիրտ մարդը խօսքը չըպրծած, սանրը մազերից հարսը չհանած, անէծքը ազդեց. խրղճուկ հարսիկը յոպոպիկ դառաւ և սանրը գլխին երդկից դուրս թռաւ:





ՄԱՆՐԱՇՐՋԱՆ Ժ.

Հ Բ Ն Գ Զ Գ Ա Յ Ա Բ Ա Ն Ե Զ

94. Աչքով տեսնում ենք առարկան, որոշում ենք նրա մեծութիւնն ու փոքրութիւնը:
95. Ականջով լսում ենք առարկայի ձայնը, որոշում ենք ձայնի ոյժը, քաղցրութիւնը:
96. Թիժով հոտոտում ենք, որոշում ենք առարկայի բուրմոնքը, գարշութիւնը...
97. Լեզուով ծաշակում ենք, որոշում ենք առարկայի քաղցրութիւնը, դառնութիւնը...
98. Մատներով շոշափում ենք առարկան, որոշում ենք նրա սնդութիւնը, փափկութիւնը, սառնութիւնը, տաքութիւնը, կոշտութիւնը, կոկոնութիւնը...
99. Հնձում ենք (ի՞նչով)... գրում ենք, կարգում ենք... շոշափում ենք... լսում ենք... տեսնում ենք... կարում ենք... նկարում ենք... սղոցում ենք... վարում ենք... ծառը կտրում ենք... երկաթը ձեծում ենք... ցուրտը զգում ենք... համը տեսնում ենք...
100. Առածներ՝ Անուշ հոտը վարդից ուզիր, մարդութիւնը մարդից ուզիր:—Ականջն էնդուր չի մեծանում, որ շատ բան է լսում:—Անհունար մարդու լեզուն երկար կըլինի:—Ուրիշի աչքը քեզ համար լոյս չի տալ:

101. Հանելուկներ՝ ա. Փետուրով կըցանեն, աչքով կըքաղեն, գլխով կ'ուտեն, մտքով կըմարսեն:
 Բ. Այն ինչն է՝ որ առաւօտեան չորս ոտի վրայ է ման գալիս, ճաշին—երկու, իսկ երեկոյեան—երեք:

102. Պ Ս Ա Կ Ն Ե Ր

(Մանկական պատեղ)

- Ամենքը. Մէկ սիրտ լինինք և մէկ հոգի,
 Միութիւնն է զարդը կեանքի.
 Ինչ խաղի մէջ որ գոհ լինինք,
 Սէր-միութեան մենք պէտք ունինք:
- Ա. Խումբը. Վարդ ծաղկին լինինք նման
 Եւ օրինակ հեզութեան.
 Թո՛ղ վարդը հանգստանայ
 Մեր մատաղ սրտի վըրայ:
- Բ. Խումբը. Կանաչ խոտը դաշտերի
 Մեր սրտին է սիրելի.
 Թո՛ղ ճիւղը կաղնի ծառին
 Պսակ լինի մեր գլխին:
- Գ. Խումբը. Աղնիւ, սիրուն մանուշակ,
 Համեստութեան օրինակ,
 Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
 Քո քնքոյշ հոտ անուշիկ:
- Ամենքը. Սիրուն կանաչ պսակին
 Թո՛ղ միանանք, բարեկամք,
 Եւ յոյսերը անբաժան
 Մնան մեզնից յաւիտեան:

103. Մ Ե Ղ Ո Ի Ն Ե Ր

Գարունն սկսուեց. արեգակը հալեցրեց դաշտերի ձիւ-
նը. հին՝ դեղնած խոտերի մօտ դուրս եկան կանաչ խոտի
բողբոջներ. ծառերի կոկոնները բացուեցան և փոքրիկ
տերևներ առաջ բերին:

Ահա մեղուն էլ ձմեռային քնից զարթեց, բըթոտ թա-
թիկներով աչերը սրբեց, ընկերներին զարթեցրեց և միա-
սին դուրս նայեցին լուսամուտից, որ տեսնեն, թէ ձիւնը,
սառուցը և հիւսիսային ցուրտ քամին անցե՞լ են:

Մեղունները տեսնում են, որ արեգակը փայլում է,
որ ամեն տեղ տաք է և լոյս. նրանք դուրս են գալիս
փեթակից և թռչում են դէպի ծիրանի ծառ:

«Միրուն ծիրանի, մի բան չունիս խեղճ մեղուններիս
համար. մենք երկար ժամանակ քաղցած ենք»:

— Ո՛չ, պատասխանում է ծիրանի ծառը. դուք շատ
շուտ էք դուրս եկել. իմ ծաղիկներս դեռ պահուած են
կոկոններիս մէջ: Գնացէք, նշենուն հարցրէք:

Մեղունները թռան, գնացին նշենու մօտ: «Միրելի նշե-
նի, արդեօք մի բան չունիս սոված մեղուններիս համար»:

— Վաղը եկէք, սիրելիք, պատասխանում է նրանց
նշենին. այսօր ինձ վրայ ո՛չ մի բացուած ծաղիկ չկայ.
Իսկ երբ բացուին, ես մեծ ուրախութեամբ կընդունեմ ձեզ:
Թռան մեղունները կակաչի մօտ, նայեցին նրա փայ-
լուն գլխին. բայց նա ո՛չ հոտ ունէր և ո՛չ մեղր:

Մեղունները տրտում և քաղցած կամենում էին յետ
գնալ տուն, բայց տեսան թփի տակ մանուշակի մուգ-կա-
պոյտ ծաղիկը: Սա բաց արաւ մեղունների համար լը
կոկոնները, որոնք լիքն էին անուշ հոտով և քաղցը
հիւթով: Կերան-խմեցին մեղունները և ուրախ-զըլարթ յետ
զարձան տուն:

104. Մ Ե Ղ Ո Ի

Հա՛, ծագեցաւ արեգակը,
Հա՛, ծաղկեցաւ մանուշակը,
Մեղուն թողեց իր փեթակը,
Տըզարզարով-արզարզարով:

Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,
Մեղր առաւ քաղցը-անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ-լուսիկ,
Պըզարզարով-պըզարզարով:

Անուշ մեղրը՝ մանր տղոց,
Դեղին մոմը՝ ամեն սրբոց.
Իսկ չարերին կըճ ու խայթոց,
Կըսկըծարով-կըսկըծարով:

105. ՈՒԼԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Լինում է-չի լինում մի այժ: Այս այժը անտառում
իրան համար տուն է շինում և իր զաւակների-փոքրիկ
ուլերի հետ բնակւում է նրա մէջ: Ամեն առաւօտ մայրը
դուրս է գնում արածելու: Գնալուց առաջ նա ասում է
իր ձագերին. «Ո՛րդիք, դռները փակեցէք, հանգիստ կացէք
և, եթէ դրսից մարդ գալու լինի, դուռը բաց չանէք»:
Ասում է ու գնում: Դաշտումը լաւ արածելուց, կուրծը
կաթնով լցնելուց յետոյ, այժը տուն է գալիս: Տան դըռ-
ները փակ են: Նա պոզերով դուռը ծեծում է ու կանչում:

«Չարիկ-մարիկ ուլիկներ,
Չալ-պըտուրիկ այծիկներ,
Ելէք, բացէք տան դուռը.
Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուլերը բաց են անում դուռը: Մայրը ծիծ է տալիս նրանց և կրկին գնում է արածելու:


Այս ամենը տեսնում ու լսում է գայլը: Նա մտքումը գնում է, որ խաբելով ներս մտնէ ուլերի փարախը, երբ մայրն այնտեղ չլինի: Մի օր, երբ այժը դուրսն է լինում, գայլը կամաց-կամաց գալիս է, թաթովը դռանը խփում է ու կանչում:

«Չայրիկ-մայրիկ ուլիկներ,
Չալ-պըտուրիկ այծիկներ,
Ելէք, բացէք տան դուռը.
Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուլերն ականջ են դնում. նրանք հասկանում են, որ դուռը ծեծողը իրանց մայրը չէ և պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կորիւր, հեռացիր այդտեղից. մեր մայրը բարակ ձայն ունի ու քաղցր է մկկում, դուռն էլ պոզերով է ծեծում»: Ասում են ու դուռը բաց չեն անում: Գայլը թողում, հեռանում է: Փոքր ժամանակից յետոյ գալիս է մայրը. նա գովում է ուլերին, որ դուռը բաց չեն արել: «Դուք շատ լաւ էք արել, սրդիք, որ դուռը բաց չէք արել, թէ չէ՝ նա ձեզ ամենիդ էլ կ'ուտէր»:



Աղուէսը պառկեց աղբի տակին, վո՛ւյ-վո՛ւյ,
Աչքը բացեց չաղ հաւի ձագին, վո՛ւյ-վո՛ւյ.
Նետով կըտամ աչքի տակին, վո՛ւյ-վո՛ւյ,
Որ մօտ չըգայ նա մեր բագին, վո՛ւյ-վո՛ւյ:



ՄԱՆՐԱՇՐՋԱՆ ԺԱ.

106. Շարաթուայ օրերը՝ Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ, կիրակի:

107. Տարուայ ամիսները՝ Յունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր:

108. Առածներ՝ էսօրուայ բանը էգուց մի գցիր: — էսօրուայ փուշը, էգուցուայ նուշը: — Վեց օր գործիր, եօթներորդ օրը հանգստացիր:

109. Հանելուկ՝ Մի մանուկ կար գօրեղ, հրեղէն՝ խըմեց հատցրեց ջուրը գետից. բոլոր մարդկանց արաւ նա քէն՝ հնձեց վերցրեց խոտը դաշտից:

110. Ե՞ Ր Բ Է Լ Ի Ն Ո Ի Մ

Չիւնը հալում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում, օրը երկարում: — Այս երբ է լինում:

Ամիսներն անցան, օրերը տաքցան. ամպեր բարձրացան, անձրև թափեցին. արտերն հասել են, հնձող են կանչում: — Այս երբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը կարճացաւ. հունձը վերջացաւ: Բարակ անձրերը բարձրից է թափուում և մութ գիշերը չորս կողմդ բռնուում:—Այս Էրբ է լինում:

Դաշտ ու ձոր անս ձիւնով ծածկուեցան. ծառերից սառցէ շիթեր կախուեցան: Մարդիկ ներս մտան իրանց տները, իսկ գազանները—իրանց բները: Գուրսը սաստկուեթեամբ քամի է փչում, ձիւնի փոշիով աչքերդ լցնում:— Ասացէք, տեսնեմ, այս Էրբ է լինում:

111. Մ Ա Յ Ի Ս Ի Ն

Մենք արժանացանք ուրախ մայիսին.
Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.
Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը
Ուրախ ու զըւարթ առաջ վազեցին:

Տերեշատ ծառի ստուերների տակ
Թռչուններն իրանց երգերն են երգում.
Կանաչ դաշտերի փափուկ մարգերում
Պէսպէս կենդանիք ուրախ արածում:

112. ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳ

Ալէլուիա, ալէլուիա.
Զատիկը արկուսով,
Զրօրհնէքը ճրագլուսով.
Թէ քնած էք, վեր զարթեցէք,
Թէ զարթուն էք, լաւ լսեցէք.
Մարիամ եկաւ լալով-լալով,
Լալով-լալով, մըղկըտալով.
Լուսաթաթախ մանուկ ծընեց,
Ծով ու ցամաք լուսով պատեց:
Ձեր տունն է չորեքսիւնի,
Չորս սիւներից սրն է սալի:

Սալը չարակամի սրտին:
Ապրի բարեկամի որդին.
Տունը շէն, տունը շէն,
Ձեր տղայոց անունն ի՞նչ է:
— Հայկ ու Արամ է:
Դրանք նստեն մէկ սեղանի,
Գինի խմեն Նախշըւանի.
Ձեր թշնամուն գետը տանի,
Գայլ ագռաւը աչքը հանի.
Մէկ պոչատ հաւ, մէկ ըստիլ*) իւղ
Տըւէք, Ալէլուիան տանի:

113. ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻՆ

Ալէլուիա, ալէլուիա.
Հըրէս եկաւ մի ձիաւոր,
Լախտը ձեռին քաջ ձիաւոր,
Աջու ձեռին Աւետարան,
Չախու ձեռին Սաղմոսարան.
Աջով գրէր, ձախով ջընջէր,
Չախով գրէր, աջով ջընջէր:
Բարեկամ, երեխայիդ անունն ի՞նչ է...
Ձեր ծովակը թախտին նստի,
Փափուկ ձեռը ջէբը տանի,
Հինգ աբասին ջէբից հանի,
Սուրբ Սարգըսին մատաղ անի:

114. ՉՈՐՍ ՅԱՆԿՈՒԹԻՒՆ

1. Չմեռն էր: Գետը ծածկուել էր սառուցով: Գազանները իւր ընկերների հետ խաղում և սղղում էր հաստ

*) Ըստիլ—գրվանքայ:

սառուցի վրայ: Բաւական խաղալուց յետոյ՝ նա ուրախ-
ուրախ տուն վազեց և ասաց հօրը. «Ա՛խ, հայրիկ, ի՛նչ
պատուական եղանակ է ձմեռը. սրբան ուրախութիւններ
ենք անում մենք՝ ճնազնդի ենք խաղում, սղղում ենք սա-
ռուցի վրայ, սահնակներով զբօսնում ենք... Ա՛խ, ի՛նչ կը-
լինէր, որ միշտ ձմեռ լինէր»: Հայրը հանեց ծոցի տետ-
րակը և ասաց. «Գրի՛ր սրա մէջ քո ցանկութիւնը»: Գա-
րեզինը գրեց:

2. Զմեռն անցկացաւ: Գարունը եկաւ: Բացուեցան
ծառերի ծաղիկները. բարձրացան դաշտերի խոտերը. ամե-
նայն տեղ ուստուսում էին հազարաւոր թիթեռներ ու
բզէզներ: Գարեզինը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քա-
ղեց, թիթեռներ բռնեց. իսկ երբ երեկոյեան տուն եկաւ,
ասաց հօրը. «Պէտք է իմանաս, հայրիկ, թէ սրբան ուրա-
խացայ ես այսօր. ճշմարիտ, շատ հիանալի եղանակ է
գարունը և, եթէ ինձ մնար, ես կըցանկանայի, որ միշտ
գարուն լինէր»: Հայրը հանեց տետրակը և առաջարկեց
Գարեզինին, որ իւր ցանկութիւնը գրէ: Գարեզինը գրեց:

3. Ամառնացաւ: Դաշտերի խոտերը հասել էին և
հնձող էին կանչում: Գարեզինն ու հայրը գնացին խոտ
հնձելու: Քանի որ հայրը վեր էր տալիս անուշահոտ խո-
տը, Գարեզինը իւր զուարճութիւններն էր անում՝ ձուկն
էր բռնում գետիցը, հատապտուղներ էր հաւաքում, զլոր-
ւում էր հոտաւէտ խոտերի վրայ: Երեկոյեան, տուն յետ
դառնալիս, նա ասաց հօրը. «Ահա այսօր ես անչափ ու-
րախացայ. երանի թէ ամառը վերջ չունենար»: Գարեզին
այս ցանկութիւնն էլ գրուեց տետրակի մէջ:

4. Վերջապէս եկաւ աշունը: Այգիներում լաւ-լաւ
պտուղները հասել էին՝ խնձորը, տանձը, սալորը, սերկեխը,
խաղողը... Մարդիկ դուրս էին եկել այգեկութի: Գարեզինն
էլ իր ծնողների հետ գնաց այգի և քաղն սկսեցին: Պէտք
էր տեսնել, թէ ի՛նչպէս էր վազվզում նա մէկ ծառի տա-

լից դէպի միւսը, ծիծաղում, երգում, խաղում և հատա-
պտուղները բերանը գցելով՝ անուշ անում: Վերջը նա
վազեց հօր մօտ, փաթաթուեց նրա պարանոցով և ասաց.
«Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն է»: Այն
ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց տըւեց,
որ նա գարնան, ձմեռուան և ամառուան համար էլ միև-
նոյն բանն է ասել:

115. ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԵՒ ԹՌՉՆԱԿԸ

«Սիրուն թռչնակ, բռնուեցար,
Ցանցից չես ազատուիլ.
Ոչինչ բանով աշխարհիս
Քեզից չենք բաժանուիլ»:

— Ա՛խ, ձեր ինչին եմ պէտք ես,
Սիրելի մանուկներ.
Թողէք ինձ ազատ թռչեմ,
Բացէք ցանցիս դրոշներ:

«Ձէ, չէ, թռչնակ, չենք թողնիլ.
Դու մեզ մօտ պիտ' մնաս.
Մենք քեզ շաքրէ հաց կըտանք,
Կ'ուտես, կ'ուրախանաս»:

— Ա՛խ, շաքրէ հաց չեմ սիրում
Քաղցրեղէն չեմ ուտում.
Թողէք, դաշտի մորեխներն
Շաքրից լաւ եմ հաշում:

«Այնտեղ, դաշտում, ձմեռը
Գուցէ ցրտից մեռնիս.
Իսկ մեզ մօտ ոսկուց շինած
Վանդակի մէջ կ'ապրիս»:

—Օ՛, մի՛ վախէք, ձմեռը
Տաք կողմեր կըթրուչեմ.
Իսկ բռնըւած՝ դրախտն էլ
Ինձ բանտ կըհամարեմ:

«Թռչնակ-թռչնակ, մենք ի՛նչպէս
Քեզ կըփայփայէինք.
Ձէինք թողնիլ, որ տխրես,
Միշտ կ'ուրախացնէինք»:

—Հաւատում եմ, բայց ձեր սէրն
Ինձ միշտ կըփասէր,
Որովհետև այդ կերպով
Աչքս յաւիտեան կըփակուէր:

«Ճշմարիտ է, ս՛վ թռչուն,
Գերութեան չես տանիլ.
Աստուած քեզ հետ, դէհ, թախի,
Ազատ, ուրախ եղիր»:

116. ՀԱՅՐ ՄԵՐ

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո.
Եկեսցէ արքայութիւն Քո. եղիցին կամք Քո որպէս յեր-
կինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր.
Թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեր թողումք մերոց
պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ
փրկեա՛ զմեզ ի չարէ, զի Քո է արքայութիւն և զօրու-
թիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Վ Ե Ր Ձ



«Ազգային գրադարան



NL0243431

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, առաջին տարի, այբբենարան և սկզբնական ընթերցարան, բազմաթիւ ընտիր պատկերներով և գրութեան օրինակներով. 33-դ տպագրութիւն. գինն է 20 կ.
2. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երկրորդ տարի. երկրորդ գիրք ընթերցանութեան այբուբենից. յետոյ, պատկերներով, նախապատ. քերականական և ուղղագրական վարժութիւններով. 22-դ տիպ. գինն է 30 կ.
3. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, երրորդ տարի. երրորդ տարուայ ուսուցման նիւթը ազգային ուսումնարանների համար, ուղղագրական և քերականական գիտելիքներով, 16-դ ձեռագրած տպագրութիւն. գինն է 50 կ.
4. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, չորրորդ տարի. չորրորդ տարուայ ուսուցման նիւթը ազգային ուսումնարանների համար. 12-դ փոփոխած և լրացրած տպագրութիւն. գինն է 55 կ.
5. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ քերականութեան տարեբքը, ընդարձակ յառաջարանով գինն է 50 կ.
6. ՀԱՅՈՐԴԻՒ Սըբազան պատմութիւն Հին Կաակարանի. գինն է 50 կ.
7. ՀԱՅՈՐԴԻՒ Սըբազան պատմութիւն Նոր Կաակարանի գինն է 50 կ.
8. ՀԵՆԶԵԼԻՒ բանաւոր և գրաւոր հաշուելու ինդիքներ Ա. և Բ. տարի, գինն է 35 կ.
9. ՀԵՆԶԵԼԻՒ՝ նոյնը, երրորդ տարի. գինն է 50 կ.

«Մայրենի Լեզուի» բոլոր մասերը բոյստուած են պատշաճաւոր իշխանութան կալմից որպէս ձեւանակ՝ Հայերէն լեզուն դաստանդիլու ժամանակ: